

Ժ.01.00 - ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ժ.01.01 – ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 5-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Նախամաշտոցյան գրի ու գրականության հարցը: Գրերի գյուտը, նրա ստեղծման պատմական նախադրյալները և նշանակությունը: Մաշտոցի կյանքը: Կորյունի <<Վարք Մաշտոցի>> երկը: 5-րդ դարի գրականության ընդհանուր բնութագիրը: Զարգացման հիմնական ուղղությունները և ժանրերը: Հայ պատմագրության համաշխարհային նշանակությունը:

Ազաթանգեղոսի <<Հայոց պատմության>> ստեղծման քաղաքական, գաղափարական հիմքերը. այն իբրև պատմական սկզբնաղբյուր ու գեղարվեստական երկ:

Փավստոս Բուզանդի անձնավորության և նրա <<Հայոց պատմության>> դպրությունների հարցը: Գրքի կերպարային ընդգրկումները: Ազատագրական պայքարի արտացոլումը: Ժողովրդական վեպը: Գեղարվեստական հատկանիշները:

Մովսես Խորենացու կյանքը, աշխարհայացքը: <<Հայոց պատմության>> կառուցվածքը, բովանդակությունը: Կենտրոնացած պետության և հայրենասիրության, հայրենիքի պաշտպանության գաղափարները այդ երկում: Խորենացու <<Հայոց պատմությունն>> իբրև համաշխարհային նշանակություն ունեցող գիտական և մշակութային երևույթ: Պատմության գիտական ու գեղարվեստական արժեքը: Կատարելատիպ հերոսները: Խորենացու ըմբռնումներն ազգային գրականության ու գիտության զարգացման հեռանկարների վերաբերյալ: Վերաբերմունքը ժողովրդական բանահյուսության նկատմամբ: Գեղեցկության չափանիշները:

Եղիշեի <<Վարդանի և հայոց պատերազմի մասին>> երկը: Պարսից դեմ հայերի 451թ. ազատագրական պայքարի արտացոլումը, պատճառները,

ընթացքը, հետևանքները: Եղիշեի աշխարհայացքը: <<Վարդանի և հայոց պատերազմի մասին>> երկի գիտական ու գեղարվեստական արժեքը:

Ղազար Փարպեցու <<Հայոց պատմությունը>>: Կառուցվածքը և ընդգրկումը: Վարդանանց պատերազմի պատկերման համեմատությունը Եղիշեի երկի հետ: Պարսիկների դեմ հայերի 481-84 թթ. ազատագրական պայքարի արտացոլումը: Փարպեցու քաղաքական ու սոցիալական հայացքները: Ժամանակի հասարակական ու մտավոր կյանքի պատկերը Փարպեցու <<Ստտախոս արեղանների մեղադրության Թղթում>>: <<Թղթի>> ճարտասանական արժեքը:

6-9-րդ դարերի հայ գրականության ընդհանուր բնութագիրը: Պայքարը պարսկաբյուզանդական, արաբական տիրապետության դեմ: Հայ մշակույթը 7-րդ դարում:

Սեբեոսի <<Պատմութիւն ի Հերակլն>> գիրքը: Պարսկա-բյուզանդական ու արաբական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի արտացոլումը: Պատմության գիտական ու գեղարվեստական արժեքը:

Հովհ. Մամիկոնյանի <<Տարոնի պատմությունը>>: Հեղինակային պատկանելիության հարցը: Պատմության բովանդակությունն ու բնույթը:

Արաբական տիրապետության շրջանի Հայաստանի պատկերը **Ղևոնդի** <<Պատմության>> մեջ: Պատմության ճանաչողական արվեստը:

Դավթակ Քերթոզի <<Ողբ ի մահն Զիվանշիրի մեծի իշխանին>> երկի բովանդակությունը և գեղարվեստական առանձնահատկությունները:

Կոմիտաս կաթողիկոս Աղծեցու <<Անձինք Նուիրեալք>> երկը 10-12-րդ դարերի հայ գրականության ընդհանուր բնութագիրը հայ պետականության վերականգնման, կյանքի աշխարհիկացման և վերածննդի, մշակույթի ընդհանուր զարգացման համապատկերում:

Հովհ. Դրասխանակերտցու <<Հայոց պատմությունը>>: Պատմիչի աշխարհայացքը: Կենտրոնաձիգ պետության գաղափարը: Պատմության

գեղարվեստական ու ոճական առանձնահատկությունները, պատմիչի կերպարը:

Թովմա Արծրունու <<Արծրունյաց տան պատմության>> պատմագիտական արժեքը: Քաղաքական տրամադրությունների արտացոլումը: Գեղարվեստական արժեքը. Ժողովրդական կյանքի պատկերները:

Անանուն Արծրունու <<Պատմության>> պատմագիտական արժեքը: Արծրունու քաղաքական իդեալները: Ժամանակի կառուցողական արվեստի ու ճարտարապետության պատկերը: Կերպարի բացարձակացման միտումը:

Մ. Կաղանկատվացու <<Աղվանից աշխարհի պատմությունը>>: Բովանդակությունը, կառուցվածքը, ընդգրկումները: Գեղարվեստական և պատմաճանաչողական արժեքը:

Ստ. Ասողիկի <<Տիեզերական պատմության>> գիտական ու ճանաչողական արժեքը:

Գր. Նարեկացու կյանքը: Նրա տեղը հոգևոր մշակութային կյանքում ու գրականության մեջ: Բերած նորությունները: Տաղերը: Բնության արժեքավորումը: Հումանիզմը: Տաղերի արվեստը: <<Մատյան ողբերգության>> երկի գաղափարական, գեղարվեստական, կրոնական արժեքը: Արվեստը: Գրական ըմբռնումները:

Գրիգոր Մագիստրոսի բանաստեղծական ժառանգությունը: <<Թղթերի>> պատմական-ճանաչողական և գրական արժեքը:

Արիստակես Լաստիվերցու <<Հայոց պատմության>> գիտական ու գեղարվեստական արժեքը:

Հովհաննես Իմաստասերը (Սարկավագ) (11-12-րդ դարեր) իբրև գիտնական ու բանաստեղծ: Իմաստասերի <<Բան իմաստութեան...>> երկը: Պոեմի տեսական արժեքը հայ գեղագիտական մտքի պատմության մեջ:

Ներսես Շնորհալու կյանքը և գործունեությունը (12-րդ դար): <<Թուղթ ընդհանրականը>>: Շնորհալու բանաստեղծությունը: Ժանրային ընդ-

գրկումները: Շնորհալու պոեմները (<<Ողբ Եդիսիոյ>>, <<Վիպասանու- նութիւն>>, <<Յիսուս Որդի>>):

Մխիթար Գոշ (12-13-րդ դդ): Աշխարհայացքը: <<Դատաստանագիրքը>>: Առակները:

Վարդան Այգեկցու (12-13-րդ դդ) առակների բովանդակային շերտերը: Առակների ճանաչողական ու գեղարվեստական արժեքը:

Տրիկի (13-րդ դար) կյանքը, աշխարհայացքը: Տաղերի սոցիալական ուղղ- վածությունը: Կրոնաբարոյական խրատները: Հակամոնղոլական տրա- մադրությունները: Բանաստեղծությունների մարդասիրական էությունը: 13-16-րդ դարերի հայ գրականության ընդհանուր բնութագիրը: Կիլիկյան պետության դերը հայ մշակույթի զարգացման գործում:

Կոստանդին Երզնկացի (13-14-րդ դդ): Աշխարհայացքը: Գրական ըմբռնումները: Բնապաշտական ու սիրային քնարերգությունը: Հոգու և մարմնի դրաման:

Հովհ. Թլկուրանցու (14-րդ դար) ստեղծագործության մոտիվներն ու առանձնահատկությունները: <<Տաղ քաջ Լիպարիտին>> երկը:

Մկրտիչ Նաղաշ (15-րդ դար): Աշխարհայացքը, տաղերի թեմատիկ հարս- տությունը: <<Վասն ագահութեան>> բանաստեղծությունը, պանդխտու- թյան մոտիվը:

Գրիգորիս Աղթամարցու (16-րդ դար) սիրերգությունը: Այլաբանությունը: <<Տաղ գեղեցիկ ի վերայ այգոյ, հոգոյ և մարմնոյ>> բանաստեղծությունը:

Նահապետ Քուչակի (16-րդ դար) հարցը բանասիրության մեջ: Քուչակը սիրերգակ: Պանդխտության հայրենները: Կրոնա-բարոյական խրատ- ները:

17-18-րդ դարերի հայ գրականության ընդհանուր բնութագիրը: Քաղաքա- կան կյանքը: Մշակույթային վիճակը: Լուսավորական շարժման սկզբնա- վորումը:

Նաղաշ Հովնաթանն (1661-1722) իբրև աշխարհիկ պոեզիայի ներկայացուցիչ: Երգիծական, սիրային, խնջույքի, խոհախրատական բանաստեղծությունները:

Պաղտասար Դպիրի և Պետրոս Ղափանցու (18-րդ դար) ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը:

Սայաթ-Նովան (1722-1795) - հայ բանաստեղծության խոշորագույն դեմքերից մեկը: Բարձրարվեստ սիրերգությունը: Ժամանակի արծազանքը նրա պոեզիայում: Հումանիզմը:

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի առաջին կեսի հայ գրականության զարգացման նախադրյալներն ու միտումները: Հայկական կլասիցիզմը, նշանավոր ներկայացուցիչները. **Արսեն Բագրատունի**: Նոր գրականության սկզբնավորման առաջին երևույթները **Հարություն Ալամդարյանի** (1796-1834թթ) ստեղծագործության մեջ (Չափաբերականք):

Մեսրոպ Թաղիադյանի (1803-1858) կյանքը: Աշխարհայացքը: Գեղարվեստական ստեղծագործության (<<Վեպ Վարդգեսի>>, <<Վեպ Վարսենկա>>, <<Թութակ Թաղիադեան>>, <<Սոս և Սոնդիպի>>) ընդհանուր բնութագիրը:

Խաչատուր Աբովյանի (1809-1848) կյանքը, հասարակական-մանկավարժական գործունեությունը: Աշխարհայացքը: Լուսավորական ու քաղաքական իդեալները: Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: <<Վերք Հայաստանի>> վեպի ժանրային յուրահատկություններն ու կառուցվածքը, Դեմիրճյանի և Իսահակյանի հողվածներն այս մասին, գրական-պատմական, գեղարվեստական արժեքը: Հայ նոր գրականության զարգացման ուղիների, բովանդակության, ժանրերի ու ձևերի հիմնավորումը <<Վերքի>> առաջաբանում: Կերպարային համակարգը: Պատմական դեպքերի և դեմքերի պատկերումը: Հեղինակը վեպում: Աբովյանի ստեղծագործության ժանրային բազմազանությունը (<<Պարապ վախտի

խաղալիքը>>, <<Թուրքի ակնչիկ>>, <<Առաջին սեր>>և այլն): Երգիծանքի դրսևորումները. <<Հազարփեշեն>> Աբովյանի պատմական դերը:

Ղևոնդ Ալիշանի (1820-1901) տեղը հայ նոր պոեզիայի պատմության մեջ: <<Նուագք>> ժողովածուն: <<Երգք Նահապետի>> շարքի բանաստեղծությունների արժեքավորումը: Ալիշանի հայագիտական գործունեությունը: 19-րդ դարի 50-60-ական թթ. հայ գրականության ընդհանուր բնութագիրը: Հասարակական հոսանքները: Մամուլը: Հրապարակախոսությունը: Թատրոնը:

Միքայել Նալբանդյանի (1829-1866) կյանքը և հանրային գործունեությունը: Աշխարհայացքը: Նալբանդյանը ազգության և ազգային-ազատագրական պայքարի մասին: Հրապարակախոսությունը (<<Նկատողությունք>>, <<Երկու տող>>, <<Հիշատակարան>> և այլն): Տնտեսագիտական (<<Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ>>) և փիլիսոփայական (<<Էգեղը և նորա ժամանակը>>) երկերը: Արձակը (<<Մինին՝ խոսք, մյուսին՝ հարսն>>, <<Մեռելահարցուկ>>): Պոեզիան: Մ. Նալբանդյանի քննադատական հայացքները (<<Կրիտիկա. Սուս և Վարդիթեր>>, <<Կրիտիկա հանդես նոր հայախոսության>>):

Ռաֆայել Պատկանյանի (1830-1892) կյանքը և գործունեությունը: Քնարերգության քաղաքական և սոցիալական մոտիվները: <<Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը>> պոեմը, <<Ազատ երգեր>> շարքը: Արձակը. նորնախիջևանյան պատմվածքները, վեպերը: Երգիծանքը:

Սմբատ Շահագիզի (1841-1907) քնարերգությունը: <<Լևոնի վիշտը>> պոեմը:

Մկրտիչ Պեշիկաշյանի (1828-1868) ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Քաղաքական և հայրենասիրական քնարերգությունը, <<Ջեյթունյան երգաշարը>>, սիրո և բնության տարերքը: Թատրերգությունը:

Պետրոս Դուրյանի (1851-1872) կյանքը: Քնարերերգության հիմնական մոտիվները: <<Տրտունջը>> և <<Ձղջում>> բանաստեղծությունները: Թատրերգության ընդհանուր բնութագիրը:

19-րդ դարի 70-80-ական թթ. հայ գրականության զարգացման քաղաքական, հասարակական ու մշակութային նախադրյալները: Հայկական ռոմանտիզմն ու ռեալիզմը:

Պերճ Պոռշյանի (1837-1907) հասարակական-մշակութային գործունեությունը: Հայ գյուղական իրականության արտացոլումը Պոռշյանի վեպերում (<<Հացի խնդիր>>, <<Ցեցեր>>, <<Հունոն>>, <<Սոս և Վարդիթեր>>, <<Բղդե>>):

Ղազարոս Աղայանի (1840-1911) գրական, մանկավարժական, լուսավորական հայացքները: Աղայանն իբրև արձակագիր (<<Արություն և Մանվել>>, <<Երկու քույր>> վեպերը: Սոցիալական ուտոպիան (<<Ժամանակակից ատենախոսություն>>): Քնարերգությունը: <<Տորք Անգեղ և Հայկանուշ Գեղեցիկ>> պոեմը: Հուշագրությունը (<<Իմ կյանքի գլխավոր դեպքերը>>):

Գաբրիել Սունդուկյանի (1825-1912) կյանքի և ստեղծագործության շրջանների ընդհանուր բնութագիրը: Բերած նորությունները: Վոդևիլները: Սոցիալ-կենցաղային երևույթների արտացոլումը (<<Խաթաբալա>>, <<Էլի մեկ զոհ>>, <<Քանդած օջախ>>): <<Պեպո>> պիեսն իբրև հայ դասական գրականության նվաճումներից մեկը: Կատակերգությունների ժանրային բնույթը և արվեստը: Արձակի (<<Վարինկի վեջերը>>, <<Համալի մասլահաթները>>, <<Հադիդի մասլահաթները>>) մարդասիրական բնույթը: Սունդուկյանի դերը հայ թատրոնի պատմության մեջ: Նրա երկերի գործառական նշանակությունը:

Բաֆֆու (1835-1888) կյանքի ու ստեղծագործության զարգացման հիմնական շրջանները: Աշխարհայացքը: Լուսավորական հայացքները: Սոցիալական երկերը (<<Ձահրումար>>, <<Մինն՝ այսպես, մյուսն՝ այն-

պես>>, <<Ոսկի աքաղաղ>>, <<Անմեղ վաճառք>>, <<Ուխտյալ միանձնուհի>> և այլն): Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության գեղարվեստականացումը ծրագրային-քաղաքական վեպերում (<<Զալալեդդին>>, <<Խենթը>>, <<Կայծեր>>) և նրանց ներքին զարգացումը: Պատմության գեղագիտական ընկալումը և պատկերումը Րաֆֆու պատմագեղարվեստական երկերում (<<Դավիթ - Բեկ>>, <<Սամվել>>, <<Պարույր Հայկազն>>, <<Խամսայի մելիքությունները>>): Րաֆֆու գրական ըմբռնումները: Ռոմանտիզմի տեսությունը: Հրապարակախոսությունը:

Հակոբ Պարոնյանի (1843-1891) կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Երգիծանքի առանձնահատկությունները: <<Ատամաբույժն արևելյան>> և <<Պաղտասար աղբար>> կատակերգությունները: Պոլսահայ կյանքի արտացոլումը <<Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ>>, երկում: <<Ազգային ջոջերի>> քննական վերլուծությունը: Քաղաքական երգիծանքը (<<Կամիթներ>>, <<Հոսիոսի ձեռատետրը>> և այլն): <<Ծիծաղ>> ժողովածուն: <<Մեծապատիվ մուրացկաններ>> վեպը: Գրական հայացքները: Ռեալիզմի տեսությունը:

Ծերենցի (1822-1888) կյանքը և հասարակական-մտավոր գործունեությունը: Պատմավեպերը՝ <<Թորոս Լևոնի>>, <<Երկունք Թ դարու>>, <<Թեոդորոս Ռշտունի>>: Ազատագրական պայքարի արտացոլումը: Ժողովրդի դերի ըմբռնումը:

Արթուրի Տյուսաբի (1842-1901) կյանքը: Կանանց ազատագրության հարցի արծարծումը: <<Մայտա>>, <<Սիրանույշ>>, <<Արաքսիա կամ Վարժուհի>> վեպերը: Տյուսաբի ռոմանտիզմը:

Հայ գրականության զարգացման նոր փուլը 19-րդ դ. 90-ականներին: Զարգացման քաղաքական, սոցիալական ու մշակութային ազդակները արևմտահայ և արևելահայ կյանքում:

Շիրվանզադեի (1858-1935) կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը: Աշխարհայացքը: 80-ական թթ. ստեղծագործության (<<Գործակատարի հիշատակարանից>>) գաղափարական ուղղվածությունը: Գավառական քաղաքի պատկերը (<<Նամուս>>, <<Չար ոգին>>, <<Ֆաթման և Ասադը>>): Ընտանիքի թեման արծակում (<<Արամբին>>, <<Մելանյա>>): Մտավորականության պատկերը. <<Արսեն Դիմաքսյան>> վեպը: Անհատի և հասարակության հարաբերությունը (<<Վարդան Ահրումյան>>, <<Արտիստը>>): Սոցիալական վեպերն ու պատմվածքները: <<Քաոս>> վեպի կոնֆլիկտը, կերպարները: Թատրերգությւնը (<<Եվգինե>>, <<Ունե՞ր իրավունք>>, <<Արմենուհի>>, <<Պատվի համար>>, <<Կործանվածը>>, <<Ավերակների վրա>>, <<Մորզանի խնամին>>). Հարցադրումները, բովանդակային ընդգրկումը, արվեստը, ստեղծած արժեքները, բնորոշ թերությունները: Գրական ըմբռնումները: Ռեալիզմի և նատուրալիզմի տեսական ըմբռնումները: Վերաբերմունքը գրական այլ ուղղությունների ու հոսանքների նկատմամբ: Շիրվանզադեն իբրև արվեստի տեսաբան:

Մուրացանի (1854-1908) կյանքը, աշխարհայացքը, գրական դավանանքը: <<Ռուզան>> դրաման: Գյուղի մասին երկերը (<<Խորհրդավոր միանձնուհի>>, <<Նոյի ագռավը>>, <<Առաքյալը>>): <<Մշակ>>- <<Նոր դար >> պայքարի արձագանքը նրա երկերում: Մուրացանի երգիծանքը: <<Լուսավորության կենտրոնը>> վեպը և <<Հատուկ թղթակիցը>> պատմվածքը: Ազգային կյանքում եկեղեցու դերի գնահատությունը: <<Անդրեաս երեց>>: <<Գևորգ Մարզպետունի>> պատմավեպը, նրա տեղը հայ պատմավիպասանության և Մուրացանի ստեղծագործության մեջ:

Նար-Ռոսի (1867-1933) կենսագրությունը, գրական ըմբռնումները, աշխարհայացքը: Ժամանակի իրականության քննադատությունը և արիեստավորության կյանքի պատկերը <<Մեր թաղը>> նովելաշարում: Պատմվածքները: Մտավորականության և ընտանիքի թեման նրա ստեղծա-

գործության մեջ («Աննա Սարոյան»), «Սպանված աղավնի»): «Մշակ»-«Նոր դար» պայքարի արձագանքը «Պայքար» վեպում: «Մահը» վեպը: Նար-Դոսի քաղաքական իդեալները:

Հովհ. Հովհաննիսյանի (1864-1929) կյանքը, քնարերգության հիմնական տրամադրություններն ու առանձնահատկությունները: Նրա դերը հայ քնարերգության զարգացման պատմության մեջ:

Ալ. Ծատուրյանի (1865-1916) կյանքի ու ստեղծագործության էական կողմերը: Սոցիալական մոտիվները: Սիրո և բնության երգերը, քաղաքական տրամադրությունները: Երգիծանքը:

90-ական թթ. հայ գյուղագրության (**Արշակ Ազապյան, Հարություն Ծուղուրյան, Ազարիա Ադեյան, Բաբկենց, Թվկատինցի**) բնորոշ հատկանիշները և ընդհանուր բնութագիրը:

Վրթանես Փափազյանի (1866-1920) կյանքը, հասարակական գործունեությունը, աշխարհայացքային հակասությունները: Ստեղծագործության ժանրերը: «Պատկերներ թուրքահայերի կյանքից» պատմվածքների և նովելների շարքը: «Տուրիստի հիշատակարանից» ակնարկաշարը: «Զրույցները» որպես ժանրային նորություն: Հայ գյուղի ռեալիստական պատկերը «Պատկերներ գյուղից» շարքում: «Ժայռը» դրաման: Վեպերի յուրահատկությունները: «Էմմա», «Սոխակի տղան»: Ազատագրական պայքարի գաղափարի մարմնավորումները: Անկումային տրամադրությունների քննադատությունը «Ծովափին» պատմվածքում: Փափազյանն իբրև գրականության պատմաբան:

Արևմտահայ 80-ականները. **Արփ. Արփիարյանի** (1851-1908) կյանքը, հասարակական, գրական ու խմբագրական գործունեությաունը: Հրապարակախոսությունը: Քաղաքական հայացքները: Գրական ըմբռնումները, ռեալիզմի տեսությունը: Արձակը: «Կյանքի պատկերներ» նովելների շարքը: Վիպակները («Կարմիր ժամուց», «Մինչև եփրբ», «Ոսկե ապարանջան»):

Տիգրան Կամսարականի (1866-1941) կյանքը, գրական հայացքները: <<Վարժապետին աղջիկը>> վեպն իբրև արևմտահայ ռեալիզմի ակնառու երևույթ: Պատմվածքների(<<Հարոն>>,<<Հովկուլը>>)ինքնատիպությունը:

Գրիգոր Զոհրապի (1861-1915) կյանքը և հասարակական գործունեությունը: Գրական հայացքները: Առաջին երկերը. <<Անհետացած սերունդ մը>> վեպը: Զոհրապի նորավեպերի առանձնահատկությունները: <<Խղճմտանքի ձայներ>>, <<Կյանքը ինչպես որ է>>, <<Լուռ ցավեր>> շարքերը: Շարքերից դուրս նորավեպերը: Նորավեպերի թեմատիկ ու գաղափարական հարստությունը: Կերպարների հոգեբանությունը:

Ռուբեն Որբերյանի (1874-1931) բանաստեղծության ընդհանուր բնութագիրը: <<Ծվանքներ>> պոեմը.<<Ադամին անեծքը>> բանաստեղծությունը: 20-րդ դարի սկզբի հայ գրականության ընդհանուր բնութագիրը: Քաղաքական ու սոցիալական կյանքի լարվածությունը: Գրական ուղղությունների ու հոսանքների բազմազանությունը: Գրականության զարգացման ուղիների հարցը: Սիմվոլիզմի դրսևորման առանձնահատկությունները: Նեոռոմանտիզմի էությունը:

Հովհաննես Թումանյանի (1869-1923) կյանքը, աշխարհայացքը: Գրողի ու գրականության դերի ըմբռնումը: Վերաբերմունքը նախորդների նկատմամբ, սեփական տեղի բնորոշումը: Քնարաէպիկական պոեմները (<<Մարո>>,<<Լոռեցի Սաքոն>>,<<Անուշ>>,<<Հառաչանք>>): <<Անուշ>> պոեմի գեղարվեստական արժեքը: Քնարական պոեմները (<<Դեպի Անհունը>>,<<Պոետն ու Մուսան>>): էպիկական պոեմները (<<Սասունցի Դավիթ>>,<<Թմկաբերդի առումը>>): <<Հազարան բլբուլ>>,<<Անբուն կկուն>> անավարտ ստեղծագործությունները: Լեգենդներն ու բալլադները: <<Փարվանայի>> արժևորումը: Քաղաքական, սոցիալական ու խոհական քնարերգությունը: Հայրենիքի քաղաքական ողբերգությունը (<<Մեր նախորդներին>>,<<Հայոց վիշտը>>,<<Հայոց լեռներում>>,<<Հոգեհանգիստ>> <<Հայրենիքիս հետ>>): Քառյակները, նյութի բազ-

մագանությունն ու արվեստի ուժը: Մանկական բանաստեղծությունը: Արձակը: <<Մերոնք>> նովելաշարը: <<Գիքորը>> և այլ պատմվածքներ: Հեքիաթները: Թումանյանը քննադատ: Հրապարակախոսությունը: Հասարակական և քաղաքական գործունեությունը: Թումանյանի արվեստի ժողովրդայնությունը:

Ավետիք Իսահակյանի (1875-1957) կյանքի և ստեղծագործության զարգացման շրջանները, աշխարհայացքը: <<Երգեր ու վերքեր>> ժողովածուն, բերած նորությունները: Գրական ուղղությունը: Բանաստեղծական մյուս ժողովածուները: Քնարերգության հիմնական մոտիվները: Սիրերգությունը (<<Ալագյազի մանիներ>> պոեմը, <<Ասպետի սերը>>, <<Հավերժական սերը>> բալլադները): Սոցիալական տրամադրությունները: Քաղաքական քնարը, հայրենիքին նվիրված երգերը: Պոեմները: <<Աբու-Լալա Մահարի>> պոեմի գաղափարական ուղղվածությունը, գրողի իդեալները: Պոեմի առանձնահատկությունները: Գեղարվեստական արձակը (<<Համբերանքի չիբուխը>>, <<Գարիբալդիականը>> և այլն): Խոհափիլիսոփայական նովելները <<Շի Հուանգ տի Բալդիխանը>>, Չինգիզ խանը>> <<Լի Թայի Պո>>, <<Սաադիի վերջին գարունը>>, <<Շիդիարը>> և այլն): Լեգենդները (<<Լիլիթ>>): <<Սասմա Մհեր>> պոեմը: Ստեղծագործության ժողովրդայնությունը:

Երվանդ Օտյանի (1869-1926) կյանքը, աշխարհայացքը: Օտյանի երգիծանքի բնույթը, առանձնահատկությունները: Քաղաքական (<<Հեղափոխության մակաբույծները>>, <<Պրոպագանդիստը>>), սոցիալական (<<Վաճառականի մը նամակները>>, <<Ընտանիք, պատիվ, բարոյական>>, <<Թաղականին կնիկը>> երգիծանքը: Դրական կերպարները Օտյանի վեպերում: <<Ընկ. Բ. Փանջունի>> վեպը որպես քաղաքական երգիծանքի գլուխգործոց: Վեպի երեք մասերի ներքին միասնությունը: Հնչակյան, դաշնակցական, ռամկավար, բոլշևիկ Փանջունու անցումը կուսակցությունից կուսակցություն: Կուսակցամոլության քննադատու-

թյունը: Փանջունին և իր գործակիցները՝ Խև Ավո, սմենց Վարդան քուրդ Հասո, Ընկ. Սարսափունի և այլն: Այլ երկեր («Ազգային բարերար», «Համբարձում աղա», «Վաճառականի մը նամակները», «Մեր երեսփոխանները» երգիծական դիմանկարների շարքը): Օտյանի խմբագրական, հրապարակախոսական գործունեությունը: Օտյանի հուշագրական ժառանգությունը՝ «Տասներկու տարի Պոլսեն դուրս»: «Անիծյալ տարիներ»-ը որպես հայոց ցեղասպանության հավաստի վկայարան:

Լևոն Շանթի (1969 – 1951) կյանքը և ստեղծագործությունը: Բանաստեղծությունները: «Լերան աղջիկը» վիպերգը: Վիպակները. «Երազ օրեր», «Դարձը», «Կինը»: Լ. Շանթը թատերագիր: «Հին աստվածներ» դրամայի արդիականությունը և աղերսները սիմվոլիզմին ու հեթանոսական գրական շարժմանը: Գեղարվեստական պատկերի երկատվածությունը: Դրամայի կերպարային համակարգը, իրական և երևակայական հերոսներ: «Կայսր» դրաման որպես պատմության գեղարվեստականացման միջոցով մարդկային բնավորությունների, իդեալի և իրականության հակասությունների բացահայտման միջոց: Օհան Գուրգենի, Վասիլ Լեկապենի, Հաննայի և Թեոֆանոյի կերպարները: Արտավազդի առասպելի գեղարվեստական մեկնությունը «Շղթավածը» դրամայում: Միջնադարյան Անիի մարդկային ու դասակարգային հարաբերությունների պատկերման արդիական արձագանքները:

Հայաստանի առաջին հանրապետության անկման գեղարվեստական արձագանքը կիլիկյան դարերը պատկերող «Ինկած բերդի իշխանուհին» ողբերգության մեջ: Գող Վասիլի և Աննայի կերպարները: Պատմության իմաստավորումն ու գեղարվեստականացումը «Օշին պայլ» ողբերգության մեջ: Անձնագրիության գաղափարի մարմնավորումը Օշինի և Ռիտայի կերպարներում: Լ. Շանթի գրական ըմբռնումները. «Բանահյուսական ճարտարապետություն» աշխատությունը:

Միսաք Մեծարենցի (1886-1908) կյանքը: Գրական ըմբռնումները: Սեփական ստեղծագործության գնահատությունը (<<Ինքնադատության փորձ մը>> հոդվածը), սիմվոլիզմի բնութագրությունը: <<Ծիածան>> ժողովածուն: Բնութագրական բանաստեղծությունները: Բնապաշտությունը: <<Նոր տաղեր>> ժողովածուն: Մեծարենցի հումանիզմը: Պոետիկան: Գրական հոդվածները. <<Նարկացիին հետ>>:

Սիամանթոյի (1878-1915) կյանքը, ուսումնառությունը: Գրական ուղղությունը և ոճը: Քնարերգության հասարակական և քաղաքական բովանդակությունը: Ժողովածուները և բանաստեղծությունների շարքերը՝ <<Դյուցազնորեն>>, <<Հայորդիներ>>, <<Հոգեվարքի և հույսի ջահեր>>, <<Կարմիր լուրեր բարեկամես>>, <<Հայրենի հրավեր>>: Սիամանթոյի քաղաքական քնարերգության ազգային ու համամարդկային բովանդակությունը: <<Սուրբ Մեսրոպ>> պոեմը:

Դանիել Վարուժանի (1884-1915) կյանքը, ուսումնառությունը և միջավայրերը: Գրական ուղղությունը: Գրական հայացքները: Բանաստեղծական ժողովածուները՝ <<Սարսուռներ>>, <<Ցեղին սիրտը>>, <<Հեթանոս երգեր>>: Հեթանոսականի ըմբռնումը: <<Հարճը>> պոեմը: <<Գողգոթայի ծաղիկներ>> շարքը: <<Հացին երգը>> ժողովածուի բնույթը, առանձնահատկությունները:

Վահան Տերյանի (1885-1920) կյանքը և գրական-հասարակական գործունեությունը: Աշխարհայացքը, գրական ըմբռնումները: Առաջին ժողովածուն՝ <<Մթնշաղի անուրջները>>: Հետագա ժողովածուներն ու շարքերը: Տերյանը և սիմվոլիզմը: Սիրերգությունը: Հայրենիքի պատկերն ու ճակատագիրը <<Երկիր Նաիրի>> շարքում: <<Հայ գրականության գալիք օրը>> և <<Հոգևոր Հայաստան>> հոդվածները: Տերյանական դպրոցը:

Արշակ Զոպանյանի (1878-1954) կյանքի ու գրական գործունեության ընդհանուր բնութագիրը: 80-90-ական թթ. ռեալիստական շարժումը և

Չոպանյանը: Արևմտահայ և արևելահայ գրականության բաղդատական գնահատականը (<<Ռուսահայեր և թրքահայեր>> հոդվածը): Հ. Տեհի հայացքների ազդեցությունը Չոպանյանի գրական ըմբռնումների վրա:

Հայ հին և միջին դարերի գրականության արժեքավորումը (Խորենացուն, Նարեկացուն, Երզնկացուն, Թլկուրանցուն, Նաղաշ Հովնաթանին, Քուչակին նվիրված աշխատությունները):

Չոպանյանը հայ նոր գրականության մասին: Դուրյանին նվիրված առաջին ուսումնասիրությունը: Խ.Աբովյանի դերի և նրա ստեղծագործության արժեքավորումը: Նոր շրջանի հայ գրողներին նվիրված ուսումնասիրությունները: (Սունդուկյան, Րաֆֆի, Պոռշյան, Ծերենց, Շիրվանզադե): Թեքեյանի, Սիամանթոյի, Վարուժանի առաջին ժողովածուների արժեքավորումը:

Սիյուռքի գրականությանն ու գրողներին նվիրված հոդվածները (Համաստեղ, Շահնուր, Թեքեյան, Զարիֆյան...): Վերաբերմունքը խորհրդահայ գրողների նկատմամբ: Զարենցի գնահատությունը: Չոպանյանը եվրոպական գրականության (Միցկևիչ, Վերհարն, Հյուգո, Իբսեն, Գոնկուր եղբայրներ, Հայնե և ուրիշներ) մասին: Ռուս գրողների մասին: Նորագույն գեղագիտական հոսանքների և արվեստագետների գնահատությունը:

Նիկոլ Աղբալյանի (1873-1947) կյանքի, գրական-հասարակական, պետական գործունեության ընդհանուր բնութագիրը: Աշխարհայացքը: Առաջին քննադատական հոդվածները Ավ.Իսահակյանի և Շանթի մասին: Կուլտուր-պատմական դպրոցի և ռուս դեմոկրատական քննադատության (Բելինսկու) ազդեցությունը Աղբալյանի հայացքների վրա:

Ժամանակակից գրականության և գրողների գնահատությունը (Սունդուկյանին, Հովհաննիսյանին, Թումանյանին, Իսահակյանին, Վարուժանին, Շանթին, Զոհրապին և այլոց նվիրված հոդվածները):

Նիկոլ Աղբալյանը գրականության պատմաբան («Հայ գրականության պատմություն»), «Դասախոսություններ հայ մատենագրության մասին», «Բանասերի հուշագիրը», «Ստեփանոս Նազարյանց», «Սայաթ-Նովայի հետ» և այլն): Ռուս և եվրոպական գրողների գնահատությունը (Լերմոնտով, Դիկկենս, Սվիֆտ...):

Արսեն Տերտերյանի (1882-1953) կյանքի ու գործունեության ընդհանուր բնութագիրը: 1910-ական թթ. աշխատանքները ժամանակի հայ գրողների (Մուրացան, Նար-Դոս, Շիրվանզադե, Թումանյան, Տերյան, Հովհաննիսյան, Նալբանդյան) և գրականության արժեքավորումը: Հոգեբանական գրականագիտական դպրոցի ազդեցությունը Տերտերյանի գիտական մեթոդի վրա: Տերտերյանի գրականագիտական հայացքների փոփոխությունը 20-30-ական թվականներին: Գրականության համակարգման նոր փորձ («Հայոց նոր գրականության պատմության, 19-20-րդ դար»): Պոկրոպսկու մեխանիստական դպրոցի ազդեցությունը: Անցյալի տեսակետների վերանայումը 1938-1939թթ. լույս տեսած դասախոսություններում: Գեղագիտական բնույթի աշխատությունները («Պարոնյանի գեղագիտական հայացքները», «Նալբանդյանի էսթետիկան»): Հայ դասական գրողներին (Ալիշան, Րաֆֆի, Ծերենց, Աղայան, Աբովյան, Սունդուկյան, Օտյան, Շիրվանզադե...) նվիրված աշխատությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայ գրականության պատմություն, գիրք 1, գիրք 2, 1955, 1959
2. Գաբրիելյան Վ., Դանիել Վարուժան, 1978, 2006:
3. Թամրազյան Հր., Երկեր, հ. 1, հ. 2, հ. 3, 2006, 2009, 2010
4. Հակոբյան Պ., Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, 1954
5. Կիրակոսյան Վ., Ռուբեն Սևակ, 1966, 1972
6. Հայ նոր գրականության պատմություն, հ.1-5, 1960 -1979

7. Մկրյան Մ., Հայ գրականության պատմություն, 1976
8. Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ, գիրք 1-3, 2003, 2007, 2010
9. Մուրադյան Ս., Երվանդ Օտյան, 2012
10. Զրբաշյան Էդ., Միքայել Նալբանյանը և արդիականությունը, 1984
11. Զրբաշյան Էդ., Հովհաննես Թումանյանի պոեմները, 1964, 1986
12. Զրբաշյան Էդ., Միսաք Մեծարենց, 1977
13. Սաֆարյան Վ., Գրողի և կերպարի անհատականությունը /Մուրացան, Նար-Դոս/, 2001
14. Սարինյան Ս., Րաֆֆի, 1957
15. Սարինյան Ս., Հայկական ռոմանտիզմ, 1966
16. Սարինյան Ս., Հայ գրականության երկու դարը, 1988
17. Սարինյան Ս., Լևոն Շանթ, 1991
18. Սաֆարյան Վ., Մկրտիչ Պեշիկթաշյան, 1972
19. Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, 1944
20. Քալանթարյան Ժ., Հայ գրականագիտության պատմություն, 1986
21. Սաֆարյան Վ., Գրողի և կերպարի անհատականությունը, 2001:
22. Հայ նոր գրականության պատմություն, հ.1-5.:, 1961-1979:

**Ժ.01.02 – ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ հասարական-քաղաքական կյանքի հանգուցային իրադարձությունները 1910-ական թվականներին և նրանց ազդեցությունը գրականության վրա: Գրական ուղղությունների, հոսանքների ու ոճերի բազմազանությունը: Գրականության գալիքի, զարգացման հեռանկարների խնդիրը արևմտահայ և արևելահայ իրականության մեջ: Գրականության զարգացման ուղիների որոնման փորձերը և գեղագիտական ծրագրերը: Հայ դեմոկրատ գրողների ստեղծագործությունը 1900-10-ական թթ.: Հեղափոխական և սոցիալական շարժումները և նրանց արձագանքը գրակա-

նության մեջ: Պրոլետարական գրական հոսանքը /Հ. Հակոբյան, Շ. Կուրդինյան, Մ. Արագի և ուրիշներ/: Հայ նորագույն գրականության սկզբնավորումը:

Հայ նորագույն գրականության զարգացման առանձնահատկությունները: Նրա երկճյուղ՝ խորհրդահայ /հայաստանյան/ և սփյուռքահայ բաժանումը: Ավանդների շարունակությունը և նոր որակը:

Եղիշե Չարենցի /1897-1937/ կյանքի գլխավոր դեպքերը և դրանց արձագանքը նրա ստեղծագործության մեջ: Բանաստեղծական առաջին շարքերը /«Երեք երգ», «Տեսիլաժամեր», «Հրո երկիր», «Լիրիկական բալլադներ»/: Չարենցը և սիմվոլիզմը: Հայրենիքի ու ազգային ճակատագրի թեման Չարենցի 10-ական թթ. պոեմներում: Ազգային երազն ու իդեալները «Կապուտաչյա հայրենիքում»: Երազների փլուզումն ու հիասթափությունը /«Դանթեական», «Վահագն», «Աթիլա», «Հարդագողի ճամփորդները», «Տաղ անձնական» և այլն/: Նոր ուղիների որոնումները հեղափոխական պոեմներում /«Սոմա», «Ամբոխները խելագարված»/: Ազգային ճակատագրի զուգորդումը հեղափոխական շարժման հեռանկարների հետ /«Ողջակիզվող կրակ» շարքը/: Չարենցի ստեղծագործությունը 1920-22թթ.: Ռադիոպոեմները: Երկրի ճակատագրի ու անհատի զոհաբերության հարցը «Մահվան տեսիլ» բանաստեղծության մեջ: «Տաղարան» շարքը: Կառուցվածքը, դասական պոետիկայի օգտագործման անհրաժեշտությունը: Անհատի հոգեկան աշխարհի արտացոլումները: Հայրենասիրության բարձրագույն արտացոլումը /«Ես իմ անուշ Հայաստանի»/: Ստեղծագործական «ձախ» մոլորությունները որոնման ճանապարհին. դասական ավանդների ժխտում, ֆուտուրիստական հրապուրանքներ: «Երեքի դեկլարացիան», «Երկու աշխարհի սահմանագծում», «Չորրորդ աստիճանի հոտենոտը» և այլ հոդվածները, «Ռոմանս անսեր», «Կապկազ թամաշա» երկերը, «Պոեզոգունա», «Կոմալ-

մանախ» ժողովածուները: Հայացք մոտիկ անցյալին: «Երկիր Նաիրի» վեպը, նրա երկալան բնույթը. երգիծանքի ու ողբերգության քաղաքական ու գաղափարական հիմքերը: Չարենցի արտասահմանյան ուղևորությունը /1924-25/ և շրջադարձը գրական հայացքներում: Վերադարձ դեպի դասական ավանդները և ազգային թեմատիկան: «Խմբապետ Շավարշը» պոեմը: Արտացոլվող ժամանակաշրջանի վերագնահատությունը: Ողբերգականը, հերոսականը և երգիծականը պոեմում: «Էպիքական լուսաբաց» /1930/ ժողովածուի ստեղծագործական, ծրագրային, գեղագիտական դրույթները: Անհատի հոգևոր հարստության արտացոլման պահանջը: Դասական ավանդների արժեքավորումը: Էպիկական արվեստի տեսությունը:

«Գիրք ճանապարհի» /1934/ ժողովածուն: Գաղափարական հիմնահարցերը և գրքի կառուցվածքը: Ժամանակային երեք չափումները և դրանց բովանդակային, իմաստային նշանակությունը: Հայրենիքի ու ժողովրդի անցյալը վերահիմաստավորող պոեմները /«Պատմության քառուղիներով»/, «Սասունցի Դավիթ», «Մահվան տեսիլ»/: Ժանրային ու բանաստեղծական նորությունները /«Տաղեր և խորհուրդներ» շարքը/, հայրենի և օտար դասական ավանդների խաչաձևումն ու հարստացումը /«Արվեստ քերթության»/: Ստեղծագործության վերջին շրջանը /1934-1937/ «Անտիպ և չհավաքված երկեր», «Անհայտ էջեր»/: Ողբերգության խորացումը, հոգեկան տվայտանքները, երազներն ու տեսիլները:

Դերենիկ Դեմիրճյանի /1877-1956/ կյանքը և գրական գործունեությունը: Բանաստեղծական որոնումները, պոեմները /«Լենկթիմուր», «Սրբի աղջիկը», «Ոչ այս աշխարհի», «Կյանքի տեսիլը»/: 1910-ական թթ. Ստեղծագործությունը: Արվեստի դերի ըմբռնումը /«Ջուլթակ և սրինգ»/: Պատմվածքները /«Ավելորդը», «Տերտերը», «Ստամոքսը», «Սեփականություն», «Խանութպանը»/: Դրամատուրգիական որոնում-

ները 10-ական թթ. /<<Վասակ>>, <<Դատաստան>>/: Մարդկանց հոգեբանության և վարքագծի փոփոխությունների արտացոլումը 20-ական թթ. պատմվածքներում /<<Մերկե>>, <<Սաթոն>>, <<Կրասնարմեյցը>>, <<Կայարանի Ակորը>>, <<Հողը>>/: <<Քաջ Նազար>> կատակերգությունը: Ժողովրդական հիմքը, գրական ավանդները, Դեմիդյանի բերած նորությունը: Նազարականության էությունը, Նազարի կերպարի նորովի մեկանաբանությունը: Ստեղծագործությունը 30-ական թվականներին: Խորհրդային կյանքի արատավոր կողմերի բացահայտումն ու սրամիտ երգիծումը <<Նապոլեոն Կորկոտյան>> պիեսում: <<Երկիր հայրենի>> դրամայի հայրենասիրական ոգին: Ազատության և անկախության գաղափարը: Պիեսի ներքին ուղղվածությունը անհատի պաշտամունքի դեմ: <<Գիրք ծաղկանց>> պատմվածքի գեղարվեստական աշխարհը, բանաստեղծական, փիլիսոփայական ոճը: Անհատի ու պահպանողական միջավայրի բախումը: Խորհրդանշական գրքի ճանապարհը: Հայ մարդու մտորումները հացի և բանի խորհուրդների շուրջ: Հայ ժողովրդի գոյի փիլիսոփայությունն ու նրա անցյալի ոգեղեն ընկալումը: <<Վարդանանք>> /1944/ վեպի ստեղծագործական պատմությունը: Վեպի արտաքին և ներքին կոնֆլիկտները; Ազատության, անկախության, հայրենասիրության տարերքը և հերոսների հեղինակային արժեքավորումն այս տեսանկյունից: Ավարայրի խորհուրդը: Միասնական ու տևական մաքառումը իբրև հայոց պատմական ճանապարհի փիլիսոփայություն: Վեպի արդիականությունը:

Ստեփան Զորյանի /1889-1967/ կյանքը և ստեղծագործական ուղու գլխավոր հանգրվանները: Առաջին՝ <<Տխուր մարդիկ>> /1918/ ժողովածուն: Խեղճ, աներազ, հոգեպես աղքատ, ավելորդ, փոքր, կյանքից մերժված մարդկանց կերպարները: Շահի, սեփականության կիրքը <<Ցանկապատ>> /1923/, <<Խնձորի այգին>> շարքերում: Հոգևոր ցանկապատ մարդկանց միջև: <<Պատերազմ>> /1925/ շարքի հակապատերազմա-

կան ուղղվածությունը: Նոր ժամանակների մարդկանց և կուսակցական գործիչների պատկերման փորձերը 20-ական թթ. /<<Եղկոմի նախագահը>>, <<Գրադարանի աղջիկը>>/: Հերոսների հոգևոր աղքատությամբ պայմանավորված գրական սխեմատիզմը: <<Ամիրյանի ընտանիքը>> վեպի դրամատիկական տարերքը, հայ կյանքի գաղափարական տատանումները: <<Մի կյանքի պատմություն>> վեպը որպես պատմական մի ժամանակահատվածի սոցիալական, հոգեբանական ու քաղաքական դիմանկար: Նրա տեղը ինքնակենսագրական վեպերի ու վիպակների /Մահարի, Թոթովենց, Եսայան/ շարքում: Զորյանի պատմական եռագրությունը /<<Պապ թագավորը>>, <<Հայոց բերդը>>, <<Վարազդատ>>/: Վեպերի պատմականությունը և արդիական հնչեղությունը:

Ակսել Բակունցի /1899 - 1937/ կյանքի կարևոր դեպքերը, ստեղծագործական ճանապարհը: Վաղ պատկերներն ու ակնարկները: Բնաշխարհի և նրա մարդկանց կյանքի խոր ճանաչում, կենսափորձի հարստացում: <<Մթնածոր>> /1927/ և <<Սև ցելերի սերմնացանը>> /1933/ ժողովածուները որպես նորագույն արձակի նվաճումներ: Բակունցյան պատումի ինքնատիպությունը: Պատումի կերպարային, բովանդակային շերտերը: Կյանքի ու արվեստի, գեղեցիկի ու հակագեղեցիկի հարաբերության խնդիրը: Բակունցի գեղագիտական իդեալը: Մարդու, հողի, աշխատանքի ու բնության դաշնությունը: Հայ հին գյուղաշխարհի կյանքի պատկերները. անցյալի լույսը և ստվերները: Հերոսը և բնաշխարհը: Բնաշխարհիկ շերտը և հերոսի հոգեկան-բարոյական կյանքը: Բնապատությունը: Կորուսյալ հայրենիքի հուշը /<<Քեռի Դավոն>>, <<Լառ-Մարգար>>, <<Ծիրանի փողը>>/: Կորցրած հայրենիքի կերպարը և հերոսի մորմոքները: Վերադարձի և վերջին հույսի երազը: Հեղափոխության գաղափարները և հայ գյուղացին /<<Բրուտի տղան>>, <<Վանդունց Բադին>>, <<Սև ցելերի սերմնացանը>>/: Երգիծանքը /<<Հովնաթան մարչ>>, <<Կյորես>>/: Երգիծանքի քաղաքական առանցքներն ու բարո-

յական ակունքները: Անավարտ վեպերը: Ժողովրդի կյանքի տարեգրությունը /<<Կարմրաքար>>/: Մեծ անհատի կերպարը <<Խաչատուր Աբովյան>> վեպում:

Գուրգեն Մահարու /1903-1969/ կյանքի ու ստեղծագործական ճանապարհի ընթացքը: Մահարու պոեզիան 20-ական թթ.: <<Մրգահաս>> ժողովածուն /1933/ և ժամանակի քննադատությունը: Հողի և աշխատանքի թեման: Արձակը. առաջին պատմվածքները, ռճական ինքնատիպությունը, սրամիտ ու կենդանի լուծումները: <<Մանկություն>> /1929/, <<Պատանեկություն>> /1930/ և <<Երիտասարդության սեմին>> /1955/ վիպակների կառուցվածքային, թեմատիկ ու գեղարվեստական միասնականությունը: <<Այրվող այգեստաններ>> վեպը: Մի քաղաքի օրերի ու բարքերի գեղարվեստական պատմությունը: Մահարու գաղափարական վրիպումները՝ ազատագրական պայքարի գնահատման հարցում: Ստալինյան համակենտրոնացման ճամբարների պատկերը <<Ծաղկած փշալարեր>> վիպակում /1988/ ու սիբիրյան շարքի պատմվածքներում:

Հայ գրականությունը պատերազմի տարիներին /1941-45թթ./: Թեմատիկ-գաղափարական վերակառուցում: Հրապարակախոսության, ակնարկի, քնարերգության ու արձակի փոքր ձևերի աշխուժացումը իբրև հրատապ խնդիրներին անմիջապես պատասխան տալու գլխավոր միջոցներ: Հայ պատմավիպասանությունը պատերազմի տարիներին:

Գեղամ Սարյանի՝ պատերազմի թեմայով բանաստեղծությունները, պոեմներն ու բալլադները:

Նաիրի Զարյանի /1900-1969/ մանկությունն ու պատանեկությունը, որբանոցային տարիները: Առաջին գրական փորձերը. թախիծը, դրա ակունքները: Եռանդուն մասնակցությունը 20-ական թթ. գրական կյանքին: Ստեղծագործությունը 30-ական թթ.: Գյուղի կոլեկտիվացման արտացոլումը <<Ռուշանի քարափը>> պոեմում և <<Հացավան>> վեպում: Իրականն ու մտացածինը այդ երկերում: <<Երկու հանճարեղ գլուխ>> բանաստեղ-

ծությունն իբրև ստեղծագործական երերուն ներքին վիճակի արտահայտություն: 30-ական թթ. գրած մնայուն բանաստեղծական էջերը:

Ստեղծագործությունը պատերազմի տարիներին: Հայրենի հողի քաղցրության, սրբության, պայքարի ու վրիժառության գաղափարները բանաստեղծություններում ու պոեմներում /<<Դու քաղցր ես, հող իմ հայրենի., <<Մարտակոչ., <<Ուղերձ իմ ժողովրդին>>, <<Ձայն հայրենական>> և այլն/: Զարյանի խոսքի բարձր ներշնչանքը, պաթոսը, համակող ուժը, վարակիչ հույզը: <<Արա Գեղեցիկ>> /1944/ դիցապատմական ողբերգությունը: Ազգային ավանդության նորովի մշակումը և գաղափարական արդիական շեշտադրությունը: Դրամաներն ու կատակերգությունները: Խորհրդային իրականության արատավոր կողմերի քննադատությունը <<Աղբյուրի մոտ>> և <<Փորձադաշտ>> կատակերգություններում:

Հովհաննես Շիրազի /1914-1984/ կյանքը և գրական գործունեությունը: Առաջին գիրքը՝ <<Գարնանամուտը>> /1985/: Գարնան, սիրո, գեղեցկության, ջահելության երգերը: Շիրազի բերած թարմությունն ու նորությունը: <<Երգ Հայաստանի>> /1940/ ժողովածուն: <<Սիամանթո և Խջեզարե>> ժողովրդական ավանդության մշակումը: Պատկերավորման արվեստը: Պատերազմի շրջանի պոեզիան: <<Բիբլիական>> պոեմը: Մարդու և բնության փոխհարաբերության խնդիրը: <<Քնար Հայաստանի>> եռահատոր ժողովածուն: Սիրո, ընտանիքի, խաղաղության երգերը: Հայաստանը Շիրազի պոեզիայում: <<Հայոց դանթեականը>> պոեմը: Մոր կերպարը <<Հուշարձան մայրիկիս>> /1968/ ժողովածուում:

Սփյուռքի գրականությունը 1920-40-ական թթ.: Սփյուռքահայ գաղթօջախների ընդհանուր բնութագիրը: Մշակույթը, մամուլը, կրթական գործը: Սփյուռքահայ գրականության սկզբնավորման ժամանակի խնդիրը: Պոլսահայ գրականությունը 1918-22 թթ. իբրև արևմտահայ գրականության վեջին փուլ: Սփյուռքահայ գրականության անվանման հարցը: Արևմտահայ վերապրող գրողների գործունեությունը սփյուռքյան

շրջանում /Տ.Կամսարական, Ռ.Որբերյան, Լ.Բաշայան, Վ. Մալեգյան, Ե.Օտյան, Վ.Թեքեյանի, Զ.Եսայան/: Արշակ Չոպանյանի գրական ու հասարական գործունեությունը: Վերապրող գրողների /Վ.Թեքեյան, Հ. Օշական, Կ.Զարյան և ուրիշներ/ նպաստը սփյուռքահայ գրականության ձևավորմանը և զարգացմանը:

Վահան Թեքեյանի /1878-1945/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Ստեղծագործության առաջին շրջանի համառոտ ուրվագիծը: <<Հրաշալի հարություն>> /1914/ և <<Կեսգիշերեն մինչև արշալույս>> /1919/ ժողովածուները: Գրական գործունեությունը սփյուռքյան շրջանում: Հասարակական-քաղաքական, մշակութային և լրագրական աշխատանքը սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում: Նոր շրջանի բանաստեղծական ժողովածուները /<<Սեր>>, <<Հայերգություն>>, <<Տաղարան>>/:

Հակոբ Օշականի /1883-1948/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Գրական գործունեության առաջին շրջանի համառոտ ուրվագիծը: Օշականի դերը մինչեղեռնյան տարիների և 1918 -22թթ. պոլսահայ գրական կյանքում: Մշակութային, մանկավարժական, գրական և քննադատական գործունեության գլխավոր դրսևորումները սփյուռքյան շրջանում: Օշականն իբրև արևմտահայ գրականության պատմաբան: <<Համապատկեր արևմտահայ գրականության>> բազմահատորանոց աշխատության արժեքը: Բանասիրական հետազոտությունները: Քննադատը: Գեղարվեստական ժառանգությունը: Պատմվածքները /<<Խոնարհները>> ժողովածուն/: Վիպասանը /<<Մնացորդաց>>, <<Ծակպտուկը>> վեպերը, <<Հարյուր մեկ տարվան>> եռավեպը/:

Կոստան Զարյանի /1885-1969/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Գրական մուտքը և գործունեության առաջին շրջանը: <<Երեք երգեր>> իտալերեն պոեմը և նրա հայերեն հրատարակությունը: <<Օրերի պսակ>> ժողովածուն: Զարյանի բանաստեղծությունների թեմա-

տիկ և ոճական հատկանիշները: Մյուս բանաստեղծությունները: Ծավալուն քերթվածները: Պատմադիցաբանական նյութերը պոեզիայում: <<Գիրք դյուցազներգությանց>> հատորը: <<Տատրագոմի հարսը>> պոեմը: Հայկական գյուղի և հայոց պատմության նորագույն շրջանի արտացոլումը: Պոեմի գրական սկզբնաղբյուրը և վերամշակման սկզբունքները: Գլխավոր կերպարները: Հոգեբանական և գաղափարական հարցադրումները: Պոեմի կառուցվածքը, արտահայտչական արվեստը և ոճը: Արձակը: Փիլիսոփայական արձակի հիմունքները նրա վիպական, տպավորապաշտ, ծրագրային գործերում: Վիպական գործերը: <<Անցորդը և իր ճամբան>> ու <<Բանկոռպը և մամուֆի ոսկորները>> գրվածքների բովանդակությունը և արվեստը: <<Նավը լեռան վրա>> վեպը և նրա գրական ճակատագիրը: Վեպի երկու հրատարակությունները, վերամշակման սկզբունքները: 1918-21 թթ. Հայաստանի պատմության արտացոլումը: Վեպի կերպարները և գաղափարական խնդիրները: Արևմտահայ բանաստեղծության, մասնավորապես Վահան Թեքեյանի ավանդները և Մերձավոր Արևելքի հայ բանաստեղծությունը /Վահե-Վահյան, Մուշեղ Իշխան, Ա. Ծառուկյան, Ժագ Հակոբյան, Գ. Ադդարյան, Զ. Մելքոնյան/:

Ֆրանսահայ բանաստեղծությունը: Ազգային ոգու և հայ ու եվրոպական բանաստեղծական ավանդների դրսևորման յուրահատկությունները /Հարութ Կոստանդյան, Բյուզանդ Թոփալյան, Նիկողոս Սարաֆյան/:

Սարաֆյանի քնարերգության հատկանիշները: Բանաստեղծական գլխավոր ժողովածուները: Արձակ գործերը: <<Վենսենի անտառը>> էսսեն: Պոլսահայ բանաստեղծությունը: Բանաստեղծական շարժման և մտածողության յուրահատկությունները պոլսահայ գաղթօջախում: Պոետական խոսքի թարմացման փորձերը պատերազմի և հետպատերազմյան շրջանում /Կ.Ճանճիկյան, Զ. Խրախունի, Զահրատ, Ի. Սարըասլուն /:

Մուշեղ Իշխանի /1914-1990/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Քնարերգության գլխավոր հատկանիշները: Գրական մուտքը: Ազգային կեցության բանաստեղծականացումը <<Տուներու երգը>> և բանաստեղծական մյուս ժողովածուները /<<Կրակ>>, <<Կյանք և երազ>>, <<Ողջույն քեզ, կյանք>>, <<Տառապանք>>, <<Արևամար>>/: Թատերգությունը /<<Կիլիկիո արքան>>, <<Մեռնիլը որքան դժվար է>>/: Արձակ ստեղծագործությունները և հուշագրական էջերը:

Սփյուռքահայ արձակի հիմնահարցերը: Գյուղագրությունը որպես կարոտի գրականություն: Հայրենի երկրի, կորուսյալ ծննդավայրի կարոտի մոտիվը իբրև սփյուռքահայ արձակի գլխավոր թեմաներից մեկը: /Համաստեղ, Վահե Հայկ, Բենիամին Նուրիկյան, Վազգեն Շուշանյան, Հակոբ Մնձուրի/: Սփյուռքի կյանքի վերլուծությունը: Նահանջի թեմայի ընդգծումը Շ. Շահնուրի, Վ. Շուշանյանի, Հ. Զարդարյանի, Զ. Որբունու, Վ. Հայկի և այլոց երկերում:

Համաստեղի /1895-1966/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Գրական մուտքը: <<Գյուղը>> և <<Անձրև>> ժողովածուները իբրև 1920-ական թթ. սփյուռքահայ արձակի վերելքի արտահատություններ: Համաստեղյան պատմվածքի գեղարվեստական հատկանիշները և մոտիվները: Վիպագրական փորձերը /<<Սպիտակ ձիավորը>>, <<Առաջին սեր>>/: Բանաստեղծական գրվածքները/<<Աղոթարան>>, <<Այծետոմար>>/: <<Հայաստանի լեռներու սրնգահարը>> դրաման:

Հակոբ Մնձուրու /1886-1978/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Մնձուրու գյուղագրության առանձնահատկությունները: Գլխավոր ժողովածուները /<<Կապույտ լույս>>, <<Արմտան>>, <<Կռունկ, ուստի՞ կուգաս>>/: Գյուղական կյանքի պատկերը պատմվածքներում: Պանդխտության մոտիվը: Գյուղական կենցաղի, ընտանիքի, սով-

րույթների արտացոլումը: Ազգագրական տվյալների գեղարվեստական նշանակությունը: Բնության պատկերը: Գեղագիտական ըմբռնումները:

Շահան Շահնուրի /1903-1974/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Շահնուրի գրականության յուրահատկությունները: Գրական մուտքը: <<Նահանջ առանց երգի>> վեպն իբրև սփյուռքահայ վիպագրության նվաճում: Ֆրանսահայության կյանքի պատկերը: Նահանջի թեման և վեպի գաղափարաբանությունը: Սիրավեպը: Կառուցվածքային և ոճական հատկանիշները: <<Հարալեզներուն դավաճանությունը>> ժողովածուն իբրև հայոց <<պատկերազարդ պատմության>> լրում: Թեմայի գեղարվեստական մշակման յուրահատկությունները: Պոլսահայ կյանքի պատկերը: Հերոսների կյանքը օտարության մեջ: 1960-70-ական թթ. պատմվածքները: Խոհագրական, վեհուշային գրվածքները:

Վազգեն Շուշանյանի /1903-1941/ կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Շուշանյանի ստեղծագործության յուրահատուկ գծերը: Բանաստեղծական փորձերը: <<Երկիր հիշատակաց>> պոեմը: Արձակը: Ինքնակենսագրական սկզբունքը և քնարականությունը: Սիրային և հոգեբանական վեպերը: <<Սիրո և արկածի տղաքը>> իբրև նրա արձակի երախայրիք: Մյուս վեպերը: Գյուղագրության և <<կարոտի գրականության>> դրսևորման առանձնահատկությունները վեպերում /<<Ճերմակ Վարսենիկ>>, <<Օրերը գեղեցիկ չեն>>/: Խոհական-փիլիսոփայական արձակը /<<Ամրան գիշերներ>>/ օրագրերը:

Հայ նորագույն գրականության զարգացման շրջանները և առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում /1945-1957, 1957-1985, 1985-2009/: 1957-1985թթ. որպես նոր փուլ: Անհատի պաշտամունքի քննադատությունը և <<ձնհալի>> գրականությունը: Գրականության նոր շնչառությունը 60-70-ական թթ.:

Անհատի պաշտամունքի և ստալինյան ճամբարների դաժան կյանքի արտացոլումը Գ. Մահարու, Մ. Արմենի, Վ. Արամյաի երկերում:

Պատերազմը մասնակիցների պատկերմամբ /Ս. Խանզադյան՝ «Երեք տարի 291 օր>>, Մ. Սարգսյան՝ «Ճակատագրով դատապարտվածները>>, «Կյանքը կրակի տակ>>, «Սերժանտ Կարոն>>, Բ. Հովսեփյան՝ «Սերմնացանները չվերադարձան>>/: Նորը պատերազմական արձակում: Պատմավեպի ընդգրկման շրջանակների մեծացումը 1960-90-ական թթ.: Պատմության նորովի քննությունը Ս. Խանզադյանի, Պ. Զեյթունցյանի, Վ. Խեչումյանի, Խ. Գյուլնազարյանի, Աղասի Այվազյանի, Վարդան Գրիգորյանի, Արմեն Մարտիրոսյանի, Զորայր Խալափյանի վեպերում:

20-րդ դարասկզբին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական ողբերգության ու նրա հետևանքների անդրադարձը Հր. Քոչարի, Ս. Խանզադյանի, Դաշտենցի, Ստ. Ալաջաջյանի, Մ. Գալշոյանի երկերում: Ժամանակակից կյանքի պատկերը Ս. Խանզադյանի, Հր. Մաթևոսյանի, Ա. Այվազյանի, Վ. Ժետրոսյանի, Զ. Խալափյանի, Ռ. Հովսեփյանի, Ն. Աղայանի, Հովի. Մելքոնյանի և այլոց երկերում:

Հրանտ Մաթևոսյանի /1935-2002/ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Գրական մուտքը. «Ահնիձոր» և «Տափաստանում» ակնարկները: Առաջին ժողովածուն՝ «Օգոստոսը»/: Թանձր ռեալիզմը, գրողի բարոյական կեցվածքը «Մենք ենք, մեր սարերը» վիպակում և «Բեռնաձիեր» շարքում: Հետագա գրքերը՝ «Ծառերը» ժողովածուն, «Տերը» կինովիպակը: Մանկապատանեկան արձակը. «Մեր վազքը» ժողովածուն: Մաթևոսյանի գեղագիտական ըմբռնումները:

Հետպատերազմյան պոեզիայի առանձնահատկությունները և զարգացման շրջանները: Ժանրային, թեմատիկ ու ոճական բազմազանությունը: 1940-ական թվականների բանաստեղծական սերնդի ինքնահաստատումը և ներդրումը հետպատերազմյան շրջանի հայ պոեզիայում: Հ. Սահյանի, Պ. Սևակի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի, Մ. Մարգարյանի, Ս.

Կապուտիկյանի, Հր. Հովհաննիսյանի բանաստեղծական գլխավոր ժողովածուները: Նրանց ընդհանուր բնութագրական գծերը:

Համո Սահյանի /1914-1993/ կյանքը և գործը: Առաջին՝ ««Որոտանի եզերքին»» գիրքը: Բնութագրական գծերը: Բանաստեղծական ճանապարհի դժվարությունները հաջորդ ժողովածուներում: Արվեստի զարգացման վերընթաց գիծը ««Բարձունքի վրա»», ««Նաիրյան դալար բարդի»», ««Մայրամուտից առաջ»», ««Հայաստանը երգերի մեջ»» ժողովածուներում: Բնության փիլիսոփայությունը, բնության գեղագիտական դերի ըմբռնումը ««Քարափների երգը»», ««Սեզամ բացվիր»» ժողովածուներում: Հայաստանի պատկերը: Սիրերգությունը: Հետագա ժողովածուները: Քնարերգության առանձնահատկությունները:

Պարույր Սևակի /1924-1981/ կյանքը և գրական գործունեությունը: Առաջին ժողովածուն՝ ««Անմահները հրամայում են»»: Ժամանակի արձագանքը. ինքնատիպության հատկանիշները: ««Նորից քեզ հետ»» /1957/ ժողովածուն իբրև բանաստեղծական շրջադարձի սկիզբ: ««Անլռելի զանգակատուն»» պոեմի պատմական ու գեղարվեստական արժեքը: Բանաստեղծական նոր որոնումների ու սկզբունքների դրսևորումը ««Մարդը ափի մեջ»» ժողովածուում: Սևակի քաղաքացիական ու գեղագիտական իդեալները ««Եղիցի լույս»» ժողովածուում: Մտավորական անհատի հոգեկան դրաման: Սևակի գրական ըմբռնումները, քննադատական հողվածները: ««Սայաթ-Նովա»» մենագրությունը և դասական գրողների մասին հողվածները:

Վահագն Դավթյանի /1922-1996/ կյանքը և գրական գործունեությունը: ««Առաջին սեր»» ժողովածուն: Բանաստեղծական հաջորդ քայլերը, տուրքը ժամանակին: ««Լուսաբացը լեռներում»» ժողովածուն: ««Ամառային ամպրոպ»», ժողովածուն իբրև գեղագիտական-բարոյական ըմբռնումների շրջադարձի սկիզբ: ««Թոնդրակցիներ»» պոեմը: Քնարականի ու էպիկականի միահյուսումը: Ոճավորման առանձնահատկու-

թյունները: Պատմության թեմատիկայի գաղափարական ու ժանրային ինքնատիպ մշակումները <<Ծուխ ծխանի>> ժողովածուում: Հողի և աշխատանքի բանաստեղծական ընկալումը <<Գինու երգը>> ժողովածուում: Ժողովրդի պատմական ճակատագրի ու կորցրած հայրենիքի բանաստեղծական վերապրումը <<Անկեզ մորենի>> գրքում: Ժանրային ու իմաստային նվաճումներ <<Կապույտ լույս>>, <<Լույսն իբրև հաց>>, <<Աք սիրո>>, <<Լույս առավոտի>> գրքերում: Պոեզիայի էության և բանաստեղծական պատկերի առանձնահատկությունները: Դավթյանի գեղագիտական ըմբռնումները: Գրական-քննադատական հոդվածները /<<Զուգահեռ ճանապարհ>> և <<Ի սկզբանե էր բանն...>> /:

Սիլվա Կապուտիկյանի /1919-2007/ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը /<<Սրտաբաց զրույց>>, <<Մտորումներ ճանապարհի կեսին>>, <<Դեպի խորքը լեռան>>, <<Ձմեռ է գալիս>> ժողովածուները/: Քաղաքիական պոեզիան: Հրապարակախոսը: Ուղեգրական արծակը /<<Քարավանները դեռ քայլում են>>, <<Խճանկար հոգու և քարտեզի գույներից>>/:

Սիյուոքահայության առջև ծառայած հարցերի արծարծումը սիյուոքահայ գրականության մեջ 20-րդ դարի երկրորդ կեսին: Թեմատիկ ու ոճական բազմազանությունը: Ավագ սերնդի /Համաստեղ, Մնձուրի, Ասատուրյան, Արամ Հայկազ, Մուշեղ Իշխան, Ժագ Հակոբյան, Անդրանիկ Ծառուկյան, Վահե-Վահյան, Անդրանիկ Անդրեասյան և ուրիշներ/ և հետպատերազմյան սերնդի /Արմեն Դուրյան, Զարեհ Մելքոնյան, Հակոբ Կարապենց, Վահրամ Մավյան, Գառնիկ Ադդարյան, Զահրատ և ուրիշներ/ ստեղծած արժեքները 1950-1980-ական թվականներին:

Զահրատի /1924-2007/ բանաստեղծական մտածողության յուրահատկությունները: Գլխավոր ժողովածուները /<<Մեծ քաղաքը>>, <<Բարի երկինք>>, <<Կանանչ հող>>, <<Մեկ քարով երկու գարուն>>, <<Մաղ մը ջուր>>/:

Հակոբ Կարապետյան /1925-1994/ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկահայ կյանքի տարեգրությունը պատմվածքներում /«Անձանոթ հոգիներ»», «Միջնարար»», «Ամերիկյան շուրջպար»», «Նոր աշխարհի հին սերմնացանները»» ժողովածուները/ և «Ադամի գիրքը» վեպում: Անձանոթ ու մենակ հոգիների դրաման: Շահնուրյան «Նահանջի» արձագանքը: Ժամանակակից /անկախության շրջանի/ գրականության մեջ իշխող նոր տրամադրությունները, դեմքերը և զարգացման միտումներն ու հեռանկարները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթաբեկյան Ա., Ակսել Բակունց, Խոսքի ու ... լռության պոեզիան, 2000
2. Անանյան Գ., Եղիշե Չարենց, 1977
3. Աղաբաբյան Ա., Եղիշե Չարենց, հ.1, հ.2, 1973, 1977
4. Աղաբաբյան Ա., Հայ սովետական գրակ. պատմություն, հ.1, 1986
5. Աղաբաբյան Ա., Արդի հայ գրականության պատմություն, հ.2, 1993
6. Աղաբեկյան Կ., Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը, 1988
7. Աղաբեկյան Կ., Հակոբ Օշական, 2006
8. Ավագյան Ա., Կոստան Չարյան, 1988
9. Ավագյան Ա., Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, 2004
10. Արզումանյան Ա., Սովետահայ վեպը, գիրք 1-5/1967, 1980, 1986/
11. Արխատկեսյան Ա., Պարույր Սևակ, 1974
12. Զաքարյան Ա., Եղիշե Չարենց, գիրք Ա., 1997
13. Գաբրիելյան Վ., Գրականության մեր ժամանակը, 2006
14. Գաբրիելյան Վ., Դասականների ժամանակը, 1997
15. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականության պատմություն, 2008
16. Գրիգորյան Ա., Ժամանակակից խորհրդահայ պոեմը /1960-80-ական թթ./, 1990
17. Գրիգորյան Ա., Բանասիրություն և բանավեճ /հոդվածների ժողովածու/, 2002
18. Դանիելյան Ա., Սփյուռքահայ վեպը, 1992

19. Էդոյան Հ., Եղիշե Չարենցի պոետիկան, 1976
20. Թամրազյան Հր., Գրական դիմանկարներ, հոդվածներ, հ.1, 1975, հ. 2, 1998
21. Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, 1980
22. Թամրազյան Հր., Եղիշե Չարենց, 1987
23. Թեոլոլյան Մ., Դրա մը գրականություն, Նյու-Յորք, հ.Ա., 1977, հ. Բ., 1980
24. Իշխանյան Ռ., Բակունցի կյանքն ու արվեստը, 1974
25. Մաթևոսյանական ընթերցումներ, հ. 1, 2006, հ. 2, 2011
26. Քալանթարյան Ժ., Ուրվագծեր արդիի հայ գրականության, 2006
27. Շահինյան Գ., Կենսագրություն և մատենագիտություն Շահան Շահնուրի, Բեյրութ, 1981
28. Չարենցյան ընթերցումներ, հ. 1-8, 1973 -2007
29. Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր /1920-1945/, 1980
30. Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր /1946-85/, 1997
31. Օշական Հ., Վահան Թեքեյան, Բեյրութ, 1985

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Գրականագիտությունը և գեղագիտությունը (էսթետիկան): Գեղագիտությունն իբրև արվեստի փիլիսոփայություն և նրա նշանակությունը գրականության տեսության համար: Գեղագիտական կատեգորիաներ:

Գեղեցիկի կատեգորիան, նրա պրոբլեմատիկան: Օբյեկտիվը և սուբյեկտիվը գեղեցիկի մեջ: Գեղեցիկը կյանքում և արվեստում: Գեղեցիկի արժևորման նշանակությունը:

Վեհը: Վեհի հարաբերությունը գեղեցիկի հետ: Վեհի արտացոլումները արվեստի և մասնավորապես գրական ստեղծագործություններում: Վեհի առնչությունները բարոյական սկզբունքների հետ (դրական և դեմոնական

վեհ): Ողբերգականի էությունը: Ողբերգականի տարբեր ձևերը (<<հնի>> և <<նորի>> պայքարը. ճակատագրի խնդիրը անտիկ գրականության մեջ): Ողբերգականն իբրև գիտակցության առանձնահատուկ վիճակ. նրա նշանակությունը գրականության համար: Ողբերգականը և ողբերգությունը: Կոմիկականը: Կոմիկականի ձևերն ու միջոցները: Գրականության երգիծական ժանրերը: Ողբերգականի և կոմիկականի միասնությունը գրականության մեջ: Այլանդակը, ստորը, սարսափելին՝ իբրև գեղագիտական հատկություններ, և նրանց հարաբերությունը գեղագիտական մյուս կատեգորիաների հետ:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գեղագիտությունը և գրականագիտությունը Հին Հունաստանում (Պլատոն, Արիստոտել հելլենիստական շրջանի գրականագիտություն, պյութագորականներ):

Միջնադարյան գեղագիտություն: Վերածնունդ: Կլասիցիզմ (Բուալյաի <<Պոետական արվեստը>>): XVIII դարի գրականագիտությունը (Ժ.-Ժ. Ռուսո, Դիդրո, Լեսսինգ, Կանտ, Գյոթե, Վոլտեր, Շիլլեր):

XIX դարի գրականագիտության հիմնական աղբյուրները: Ռոմանտիզմի գեղագիտությունը: Հեգելի <<էսթետիկան>>: Նիցշե: Սիմվոլիզմի տեսական միտքը:

XX դարի գրականագիտական ուղղությունները (ֆրեյդիզմ, էկզիստենցիալիզմ, ստրուկտուրալիզմ, <<Նոր քննադատություն>>):

Հայ գրականագիտության զարգացման փուլերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արվեստի տեսակների դասակարգման սկզբունքները (Լեսսինգ, Հեգել, Տեն.): Տարածական և ժամանակային, համադրական արվեստներ: Գրականության ժամանակային բնույթը:

Գրականությունը և տարածական արվեստները: Գրականությունը և ճարտարապետությունը (Գրականությունն իբրև <<բառային ճարտարապետություն>>: Կլասիցիզմ):

Գրականությունը և քանդակագործությունը (Գրականությունն իբրև քանդակագործություն: XVIII դարի տեսությունները):

Գրականությունը և ժամանակային արվեստները: Հեգելը գրականության և երաժշտության մասին: Գրականության ստորադասությունը երաժշտությանը (Շոպենհաուեր): Պոետիկան իբրև <<բառային երաժշտություն>>. սիմվոլիզմի տեսությունը: Գրականությունը և համադրական արվեստները (թատրոն, կինո):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

Գրականության պատմական զարգացման օրինաչափությունները: Արվեստի տեսակների զարգացման անհամաչափությունը և գրականությունը: Գրականության <<վերժամանակյա>> զարգացման տեսությունը Հեգելի <<էսթետիկա>>-ում: Արվեստի ծագման տեսությունները, (<<անշահագրգիռ գեղագիտություն>> և <<շահագրգիռ ուտիլիտարիստական>> տեսությունները):

Գրականության և պատմության փոխկապվածությունը (գրականության ստեղծումը պատմության և պատմության ստեղծումը գրականության կողմից):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Ձևի և բովանդակության բաժանման անբավարարությունը ժամանակակից գրականագիտության մեջ: Ստեղծագործությունը իբրև կառուցվածք: Կառուցվածքն իբրև ձևի և իմաստի անբաժանելի միասնություն:

Կառուցվածքի բնույթը: Կառուցվածքային տարրերի համարժեքությունը կառուցվածքի մեջ: Կառուցվածքի ներքին և արտաքին մակարդակները (ներքին-իմաստային և արտաքին-տեքստային մակարդակներ):

Կառուցվածքային մակարդակների բնույթը և գործառնության ոլորտները: <<Ներքին մակարդակը>> որպես արտաքին անշարժ - անփոփոխ մակարդակի (տեքստի) շարժվող - փոփոխվողի (հոգեբանական – իմաստային) հակադիր կողմը: Տեքստը որպես հակադիր կողմերի միասնություն:

ԳՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հասկացություն գեղարվեստական ինֆորմացիայի մասին. Տարբերությունը ինֆորմացիայի մյուս ձևերից (գիտական, փիլիսոփայական, հասարակագիտական և այլն):

Գեղարվեստական ինֆորմացիայի և նրա հաղորդման միջոցների փոխկախվածությունը. ինֆորմացիայի հաղորդման <<միականալային>> բնույթը: Վերլուծությունն իբրև ինֆորմացիայի մատուցման ձև: Ինֆորմացիայի ընկալման <<աղմուկների>> (խանգարիչ տարրերի) վերհանումը վերլուծման կողմից:

Վերլուծությունը և մեկնաբանությունը գրականագիտության և քննադատության մեջ (ստեղծագործությունը գրա-պատմական ընդհանուր համատեքստի և ժամանակակից ընթացիկ գրական գործընթացում):

Վերլուծության պատմագործառութային ասպեկտները. ա) վերլուծությունը պատմական պոետիկայի տեսանկյունից (ստեղծագործությունն իբրև պատմական երևույթ). բ) վերլուծությունը սոցիոլոգիայի տեսանկյունից (ստեղծագործությունն իբրև հասարակական հարաբերությունների գեղարվեստական արտահայտություն). գ) հոգեբանական վերլուծություն (ստեղծագործությունն իբրև հոգեբանական երևույթ). դ) վերլուծությունը միջակայի մակարդակում (ստեղծագործությունն իբրև անհատական միջկամ միջային գիտակցության արտահայտություն). ե) կառուցվածքաբանական վերլուծություն (ստեղծագործությունն իբրև կառուցվածք). զ) լեզվա-նշանային վերլուծություն (ստեղծագործությունն իբրև լեզվական-նշանային համակարգ). է) սեմանտիկական (իմաստաբանական) վերլու-

ծություն (ստեղծագործությունն իբրև իմաստային հարաբերությունների համակարգ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵՂՈՒՆ

Լեզուն իբրև գեղարվեստական պատկերման միջոց: Լեզվի հաղորդակցական, հոգեբանական և գեղարվեստական մակարդակները:

Բառի <<ներքին ձևը>> և նրա գեղարվեստական նշանակությունը: Բառի գեղագիտական գործառույթը: Լեզվաարտահայտչական միջոցները և կառուցվածքները: Գեղարվեստական լեզվի մետաֆորային (փոխաբերական) շարքը. մակդիր (էպիտետ)- համեմատություն-մետաֆոր (փոխաբերություն): Մետաֆորը իբրև <<զարդանախշ>> և կառուցվածք:

Մետաֆորի ինֆորմատիվ բնույթը (յուրաքանչյուր մետաֆոր = ինֆորմացիա) և ինֆորմացիայի մետաֆորային բնույթը (յուրաքանչյուր ինֆորմացիա =մետաֆոր): Պոեզիայի մետաֆորային հիմքը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍՆԸ

Գեղարվեստական կառուցվածքի ինֆորմացիան: Բովանդակությունը և ինֆորմացիան: Հեղինակ - տեքստ - ընթերցող: Տեքստն իբրև ինֆորմացիայի զարգացում: Հասկացություն համատեքստի մասին: Կոնտեքստի պատմական, հոգեբանական և լեզվական ըմբռնումները: Համատեքստը՝ գեղարվեստական լեզվի իմաստաբանական հիմք:

ԳՐԱԿԱՆ ՍԵՌԵՐ ԵՎ ԺԱՆՐԵՐ

Հասկացություն գրական սեռերի և տեսակների մասին: Գրական սեռերը և նրանց բաժանման սկզբունքները: Էպիկական – քնարական - դրամատիկական սեռեր. Էպիկական կերպար և քնարական կերպար: Դրամատիկական սեռի յուրահատկությունը: Դրամատիկական կոնֆլիկտի և սյուժեի, դրամատիկական կերպարների բնույթները:

Գրական ժանրի ըմբռնումը: Ժանրերի տարբերակման չափանիշները (թեմատիկ և կոմպոզիցիոն – կառուցվածքային): Ժանրը և գրական ժառանգորդության պրոբլեմները: Ժանրերի փոփոխություններն ու

զարգացումները: Ժանրը՝ ավանդույթի և նորարարության միասնություն: Ժանրային համակարգեր:

Ժանրերի մշակութաբանական հիմքերը. դրաման և արևմտյան մշակութային համակարգը: Դրաման՝ արևմտյան գրական ժանրերի առաջատար. դրաման և դրամատիզմը: Լիրիկան արևելյան մշակութային համակարգում: Արևմտյան լիրիկայի դրամատիկական և արևելյան դրամայի լիրիկական բնույթը: Էպիկական ժանրերի մշակութաբանական հիմքերը: Պոեզիան և միֆը:

ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրական ուղղության ըմբռնումը: Գրականության պատմական զարգացումը իբրև գրական ուղղության հիմք: Գրական ուղղության կապը ժանրային համակարգի հետ:

Կլասիցիզմ. հիմնական գծերը: Կլասիցիզմի տեսությունը (Բուալոյի «Պոետական արվեստը»): Ժանրային համակարգը.«բարձր» և «ցածր» ժանրերը: Թեմատիկ առանձնահատկությունները: Ֆրանսիական կլասիցիզմի պոետիկան: Կլասիցիզմը ազգային գրականություններում: Կլասիցիզմի «նորմատիվ էսթետիկայի» հետագա ճակատագիրը:

Ռոմանտիզմի փիլիսոփայությունը և գեղագիտությունը: Գերմանական փիլիսոփայությունը (Կանտ, Ֆիխտե, Շեյլինգ) և ռոմանտիզմը: Ռոմանտիզմի լեզուն և ժանրային համակարգը: Ռոմանտիզմը Անգլիայում. («Լճային» դպրոցի բանաստեղծները. Բայրոն և Շեյլի): Ֆրանսիական ռոմանտիզմի գլխավոր գծերը (Վ. Հյուգոյի «Կրոմվեյլի» առաջաբանը): Ռոմանտիզմը ազգային գրականություններում:

Ռեալիզմը իբրև գեղարվեստական ինքնուրույն մեթոդ: Ռեալիզմի զարգացման փուլերը և ժանրային նախասիրությունները: Ռեալիզմի և ռոմանտիզմի տիպաբանական տարբերությունները:

XIX դարի գեղարվեստական ուղղությունները. նատուրալիզմը և սիմվոլիզմը որպես ռոմանտիզմի քայքայման արդյունք: Իմպրեսիոնիզմը կերպարվեստում և գրականության մեջ:

XX դարի գեղարվեստական ուղղությունները: Ֆուտուրիզմի առաջացումը և գեղագիտական հայեցակարգը: Սյուրռեալիզմ. ֆրեյդիզմի հոգեբանական – մշակութաբանական տեսությունը և սյուրռեալիզմը:

Սյուրռեալիզմի մանիֆեստները (Ա. Բրետոն): Սյուրռեալիզմը գեղանկարչության և պոեզիայի մեջ: Էկզիստենցիալիզմ. փիլիսոփայական հիմքերը և գեղագիտական դիրքորոշումները: Ֆրանսիական էկզիստենցիալիզմ: Խորքային հոգեբանության խնդիրները ժամանակակից գրականագիտության մեջ (Կ. Յունզը և նրա հետևորդները):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Է.Ջրբաշյան, Գրականության տեսություն. 5-րդ հրատ. Ե., 1980
2. Է.Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն. Ե., 2011
3. Ռ. Ուելլեք, Օս. Ուորրեն, Գրականության տեսություն, Եր., 2008
4. Յու. Բորն, Գեղագիտություն, Ե., 1982
5. Գրականության տեսության արդի խնդիրներ, Ե., 2016
6. Н.Д. Тамарченко, В.И.Еюпа, С.Н.Бройтман. “Теория литературы” в 2тт. п/р. Н.Д. Тамарченко, М., 2004
7. Б.В.Томашевский, Теория литературы, Поэтика. М., 2002
8. О.И.Федотов. Основы теории литературы в (ч.1: Литературное творчество и литературное произведение, ч.2: Стихосложение и лит. процесс), М., 2003
9. В.М. Жирмунский, Введение в литературоведение. СПб., 1996

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժ. Քալանթարյան. Հայ գրականագիտության պատմություն, Ե. 1986
2. Վ. Հովսեփյան. Գեղագիտական ուսմունքների պատմություն, Ե. 1979
3. Էդ. Ջրբաշյան. Պոետիկայի հարցեր. (գլ. 1. Գեղարվեստական մեթոդի էությունը, գլ.2. Գրական ժանրերի հիմնական չափանիշները), Ե., 1976

4. Էդ. Ջրբաշյան. Գրականագիտություն և գրականություն («Բուսյուն և կլասիցիզմի տեսությունը», «Պոեմ և բալլադ»), Ե., 1983
7. Фарино Е. Введение в литературоведение. СПб., 2004.
8. Фоменко И.В. Практическая поэтика, М., 2006
9. Фесенко Э.Я. Теория литературы, М., 2005
10. Хализев В.Е. Теория литературы, М., 2003
11. Михайлов Н.Н. Теория художественного текста, М., 2006
12. Зинченко В.Г. Методы изучения литературы: системный подход, М., 2002
13. Л. Зоркин А. Л., Эстетика, М., 2008
14. Зарубежная эстетика и теория литературы XIX-XX вв.: Трактааты. Статьи. Эссе, М., 1987
15. Современная литературная теория литературы: антология, М., 2004
16. Французская семиотика: от структурализма к постструктурализму, М., 2000.
17. Структурализм: за и против, М., 1975.
18. Барт Р., Избранные работы: Семиотика. Поэтика, М., 1994
19. Козлов А.С. Литературоведение Англии и США XX века, М., 2004
20. Эрлих В. Русский формализм: история и теория. СПб., 1996
21. Николаев П.А., Курилов А.С., Гришунин А.Л. История русского литературоведения, М., 1980

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Краткая литературная энциклопедия в 9 томах, М., 1962-1978
2. Литературный энциклопедический словарь, М., 1987
3. Литературная энциклопедия терминов и понятий, М., 2001
4. Западное литературоведение XX века: энциклопедия, М., 2004
5. Руднев В.П. Энциклопедический словарь культуры XX века, М., 2001
6. Художественное восприятие: основные термины и понятия Словарь-справочник, Тверь, 1991
7. Введение в литературоведение: Литературное произведение: основные понятия и термины п/р. Л.В. Чернец. М., 2006

Ժ.01.03 – ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հին Ռուսիայում քրիստոնեության ընդունումը և նրա մշակութային նշանակությունը: Հին ռուս գրականության սկզբնավորումը:

Վարքագրությունը հին ռուս գրականության մեջ:

Հնագույն տարեգրություն՝ «Վաղնջական ժամանակների ասքը»: Եկեղեցական և ուսուցողական ճարտասանությունը Հին Ռուսիայում: Միտրոպոլիտ Իլարիոնի «Խոսք Օրենքի և Բարեբերության մասին»: «Վլադիմիր Մոնոմախի խրատը»:

«Ասք Իգորի արշավանքի մասին»: «Ավագերեց Ավվակունի վարքը»:

18-ՐԴ ԴԱՐԻ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետրոսյան դարաշրջանի վիպակների նոր հերոսը և նրա պատկերման սկզբունքները: Ա.Կանտեմիրի երգիծանքի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները:

Կլասիցիզմը ռուս գրականության մեջ՝ Վ.Տրեդիակովսկի, Ա.Սումարոկով, Մ. Լոմոնոսով: Վ.Տրեդիակովսկու դերը ռուս գրականության զարգացման մեջ: Մ.Լոմոնոսովի ներբողները: Ա.Սումարոկովի թատերագրությունը: Դ.Ֆոնվիզինի թատերագրությունը: Գ.Դերժավինի պոեզիայի առանձնահատկությունները:

Գ.Դերժավինի խոհափիլիսոփայական քնարերգությունը:

Ն.Կարամզինի «Թշվառ Լիզան» վիպակը որպես ռուսական սենտիմենտալիզմի ստեղծագործություն: Ն.Կարամզինի «Բորնգոլմ կղզին» վիպակը. Նախառոմանտիզմի հատկանիշներ:

19-ՐԴ ԴԱՐԻ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարասկզբի ռուսական ռոմանտիզմի պոեզիան՝ Վ.ժուկովսկի, Կ. Բատյուշկով: Ա.Գրիբոեդովի «Խեչքից պատուհաս» կատակերգությունը:

Ա.Պուշկինի ազատասիրական պոեզիան: Պուշկինի սիրային քնարերգությունը: Բանաստեղծի և պոեզիայի թեման Ա.Պուշկինի քնարերգության մեջ: Պուշկինի խոհափիլիսոփայական բանաստեղծությունները: Պուշկինի ռոմանտիկական պոեմները՝ «Կովկասի գերին», «Բախչիսարայի շատրվանը», «Գնչուները»: Ա.Պուշկինի «Պոլտավա» և «Պղնձե հեծյալը» պոեմները: Պուշկինի «Եվգենի Օնեգին» վեպը որպես «ռուսական կյանքի հանրագիտարան»: «Եվգենի Օնեգին» վեպի գլխավոր հերոսների կերպարները: Ա.Պուշկինի թատերագրությունը՝ «Բորիս Գոդունով», «Փոքր ողբերգություններ»: Պուշկինի արձակը՝ «Պիկովայա դամա», «Բելկինի վիպակները», «Կապիտանի աղջիկը»:

Մ.Լերմոնտովի քնարերգությունը. «Դիմակահանդես» դրաման. «Դևը» և «Մծիրի» պոեմները: «Մեր ժամանակի հերոսը» վեպի կոմպոզիցիոն առանձնահատկությունները: Պեչորինի կերպարը:

Ն.Գոգոլի «Պետերբուրգյան վիպակները»: Ն.Գոգոլի «Մեռած հոգիներ» պոեմի հիմնախնդիրները: Ն.Գոգոլի «Մեռած հոգիներ» պոեմը. Կավվածատերերի կերպարները: Ն.Գոգոլի «Վերաքննիչը» կատակերգությունը: Վ.Բելինսկին և «նատուրալ դպրոցը»:

Ա.Գերցենի «Ո՞վ է մեղավոր» վեպի հիմնախնդիրները և կոմպոզիցիոն առանձնահատկությունները: Ա.Գերցենի «Դեպքեր և խոհեր» երկը:

Ի.Գոնչարովի «Օբլոմով» վեպի գաղափարները և կերպարները: «Սովորական պատմություն» վեպի գաղափարական հիմնախնդիրները և կոմպոզիցիոն առանձնահատկությունները:

Ա.Օստրովսկու սատիրական կատակերգությունը: Հոգեբանական դրաման Ա.Օստրովսկու ստեղծագործության մեջ՝ «Ամպրոպ», «Անօժիտը»:

Ֆ.Տյուտչևի քնարերգությունը: Ա.Ֆետի քնարերգությունը:

Ի.Տուրգենևի վիպակները սիրո մասին՝ «Ասյա», «Առաջին սերը», «Գարնանային ջրեր»: «Ռուդին» վեպը: Ի.Տուրգենևի «Որսորդի հիշատակարա-

նը» ժողովածուն՝ գիրք ռուս ժողովրդի մասին: Ի.Տուրգենևի «Ազնվական բույնը», «Հայրեր և որդիներ» և «Նախօրեին» վեպերը:

Ն.Նեկրասովի քնարերգության հիմնական մոտիվները: Ն.Նեկրասովի պոեմները: Մ.Սակոտիկով-Շչեդրինի «Պարոնայք Գոլովյովներ» վեպը:

Ֆ.Դոստոևսկու «Խեղճ մարդիկ» վեպը: «Փոքր մարդու» թեմայի զարգացումը 19-րդ դարի ռուս գրականության մեջ: «Ապուշը» վեպի գաղափարները և կերպարները: «Ոճիր և պատիժ» վեպը: Ռոդիոն Ռասկոլնիկովի տեսությունը: «Կարամազով եղբայրներ» վեպի գաղափարները և կերպարները: Իվան Կարամազովի տեսությունը: Մեծ հավատաքննիչի մասին լեգենդի դերը «Կարամազով եղբայրներ» վեպի գաղափարային համատեքստում:

Լ.Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպը: Կանանց կերպարները «Պատերազմ և խաղաղություն» վեպում: Պլատոն Կարատակի տեսությունը: Լ.Տոլստոյի «Իվան Իլյիչի մահը» վիպակի հիմնախնդիրները: «Աննա Կարենինա» վեպի հիմնախնդիրները: «Հարություն» վեպը:

Ա.Չեխովի պատմվածքները՝ «Թռի-վրին», «Իոնիչը», «Հիվանդասենյակ N 6» և այլն: Ա.Չեխովի թատերագրությունը՝ «Բալենու այգին», «Երեք քույր»: Ա.Չեխովի թատերագրությունը՝ «Քեռի Վանյան», «Ճայը»:

20-ՐԴ ԴԱՐԻ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսական սիմվոլիզմը և նրա ներկայացուցիչները: Վ.Բրյուսովի պոեզիան: Կ.Բալմոնտի քնարերգությունը: Ֆ.Սոլոգուբի քնարերգության թեմաներն ու մոտիվները: «Մանր չարք» վեպը: Ա.Բելու քնարերգությունը: Ա.Բլոկի «Բանաստեղծություններ Չքնաղ Տիկնոջ մասին» գիրքը: Ողբերգական մոտիվները Ա.Բլոկի ուշ շրջանի քնարերգության մեջ՝ («Սարսափելի աշխարհ» բանաստեղծությունների գիրքը): Ռուսաստանի պատմական ճակատագրի թեման Ա.Բլոկի քնարերգության մեջ՝ «Կուրիկովյան դաշտում» բանաստեղծական շարքը, «Տասներկուսը» պոեմը:

Ակմեիզմը որպես գրական ուղղություն:

Ն.Գումիլյովի պոեզիան: Օ.Մանդելշտամի պոեզիան: Ա.Ախմատովայի պոեզիան: Մ.Յվետսևայի քնարերգությունը: Ֆուտուրիզմը ռուս գրականության մեջ: Վ.Մայակովսկու ստեղծագործությունը:

Բ.Պաստերնակի «Բժիշկ ժիվագո» վեպը. կանանց կերպարները: Բ.Պաստերնակի «Բժիշկ ժիվագո» վեպը. Յուրի ժիվագոյի կերպարը: Յուրի ժիվագոյի բանաստեղծությունները:

Ա.Եսենինի ստեղծագործությունը: Ի.Բունինի ստեղծագործությունը:

Լ. Անդրեևի ստեղծագործությունը: «Հուդա Իսկարիովտացի» վիպակի հիմնախնդիրներն ու կերպարները:

Մ.Գորկու վաղ շրջանի պատմվածքները: «Արտամոնոպների գործը» վեպը: «Հատակին» դրաման:

Մ.Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտը» վեպի կոմպոզիցիոն առանձնահատկությունները, «Վարպետն ու Մարգարիտը» վեպի կերպարային համակարգը: Մ.Բուլգակովի «Շան սիրտը» վիպակը:

Մ.Շոլոխովի «Խաղաղ Դոնը» վեպը: Գրիգորի Մելեխովի ողբերգությունը: Կանանց կերպարները: Վ.Շուկշինի պատմվածքների խնդիրները և հերոսները: Ա.Սոլժենիցինի «Իվան Դենիսովիչի մեկ օրը» վիպակը:

Ա.Տվարդովսկու պոեմները՝ «Վասիլի Տյորկին», «Հիշողության իրավունքով»:

1960-70-ական թվականների պատերազմական արձակը՝ Վ.Բիկովի և Վ. Աստաֆյեվի ստեղծագործությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Авраменко А.П. А. Блок и русские поэты XIX века. - М., 1990.
2. Альфонсов В.В. Поэзия Пастернака. - Л., 1990.
3. Бабореко А.К. И.А. Бунин. - М., 1983.
4. Бочаров С.Г. Поэтика Пушкина: Очерки. - М., 1974.
5. Бухштаб Б.Я. А.А.Фет. Очерк жизни и творчества. - Л., 1990.
6. Ветловская В.Е. Поэтика романа «Братья Карамазовы». - Л., 1977.

7. Гаспаров М.Л. О русской поэзии. – СПб., 2001.
8. Гинзбург Л. Я. О психологической прозе. Л., 1971.
9. Жирмунский В.М. Творчество Анны Ахматовой. – Л., 1973.
10. История русской литературы XIX в трех частях. Под ред. В.И. Коровина. – М., 2005.
11. История русской литературы X—XVII веков. Д. С. Лихачева. – М., 1980.
12. История русской литературы конца XIX – начала XX века: в 2 тт.; под ред. В. А. Келдыша. – М.: 2007.
13. История русской литературы. XX век. В 2 ч. Под ред. В.В. Агеносова. – М., 2007.
14. Катаев В.Б. Проза Чехова: проблемы интерпретации. – М., 1979.
15. Краснощекова Е. А. И. А. Гончаров: Мир творчества. – СПб., 1997.
16. Кулешов В.И. Натуральная школа в русской литературе. – М., 1985
17. Кусков В.В. История древнерусской литературы. – М., 1982.
18. Лебедев Ю.В. История русской литературы XIX в трех частях. – М., 2007-2008.
19. Лебедева О.Б. История русской литературы XVIII века: М., 2000.
20. Лермонтовская энциклопедия. – М., 1981.
21. Лихачев Д.С. «Слово о полку Игореве» культура его времени. Л., 1973.
22. Лихачев Д.С. Развитие русской литературы X-XVII веков. Эпохи и стили. – Л.,1973.
23. Лотман Ю.М. В школе поэтического слова: Пушкин, Лермонтов, Гоголь. – М., 1988.
24. Лотман Ю.М. О поэтах и поэзии. – СПб., 1996.
25. Лотман Ю.М. Роман А.С.Пушкина «Евгений Онегин»: Комментарий. – СПб., 1995.
26. Манн Ю.М. Поэтика Гоголя. – М., 1988.
27. Марченко А.М. Поэтический мир С.Есенина. – М., 1989.
28. Минералова И. Русская литература серебряного века: Поэтика символизма. – М., 2003.
29. Минц З.Г. Поэтика Александра Блока. – СПб., 1999.
30. Москвичева Г. В. Русский классицизм. – М., 1978.
31. Мусатов В.В. История русской литературы первой половины XX века (советский период) – М., 2001.
32. Набоков В.В. Лекции по русской литературе. – СПб., 2014.
33. Орлов П.А. Русский сентиментализм. – М., 1977.

34. Орлов П.А. История русской литературы XVIII века. М., 1991.
35. Русская литература XX века: В 2 т. / ред. Л.П. Кременцова. - М., 2002.
36. Русская литература рубежа веков (1890-е – нач. 1920-х годов). – В 2 кн. – М., 2000.
37. Соколов А. Г. История русской литературы конца XIX - начала XX века. - М., 2006.
38. Тынянов Ю.Н. Пушкин и его современники. – М., 1968.
39. Федоров В.Н. Литературные направления в русской литературе XVIII в. - М., 1979.
40. Фридлиндер Г.М. Достоевский и мировая литература. - М., 1980.
41. Чудаков А. П. Слово — вещь — мир. От Пушкина до Толстого. Очерки поэтики русских классиков. М., 1992.
42. Чуковский К.И. Мастерство Некрасова. - М., 1971.
43. Шаталов С.Е. Художественный мир И.С.Тургенева. - М., 1979.
44. Эйхенбаум Б.М. О литературе. - М., 1987.
45. Яновская Л.М. Творческий путь М.Булгакова. - М., 1983.

Ժ.01.05 – ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական բանահյուսությունը իբրև մարդու հոգևոր գործունեության առանձնահատուկ ձև: Բանագիտության առարկան և խնդիրները:

Բանահյուսության ծագման տեսությունը: Բանահյուսությունն իբրև սինկրետիկ-համադրական արվեստ:

Բանահյուսական ստեղծագործությունների հիմնական հատկանիշները: Ժողովրդական բանահյուսության հանրային բնույթը. նրա պատմական և կենցաղային հիմքերը. ավանդման բանավոր եղանակը. ավանդականությունը. ավանդականության միասնությունը հանպատրաստի հորինվածությունը: Բանահյուսական ստեղծագործությունների տարբերակայնությունը. նրա կապը բանավոր բնույթի և կատարման հետ:

Ինվարիանտի հասկացությունը: Ժողովրդական բանահյուսության սոցիալական բնույթը: Ժողովրդական բանահյուսությունը իբրև պատմական կարգի երևույթ: Բանահյուսության տեղը նախնադարյան մարդու կրոնա-ճիսական գործունեության համակարգում. Բանահյուսության մեջ արտացոլված վաղնջական մտածողության, սոցիալական հարաբերությունների, ազգագրական երևույթների ձևերը: Բանագիտությունն իբրև գիտություն, նրա տեղը այլ գիտությունների համակարգում: Արդի բանագիտության հիմնական ուղղությունները. Բանասիրական, ազգագրական, պատմա-սոցիոլոգիական, արվեստագիտական երաժշտագիտական:

Բանահյուսության ուսումնասիրման մեթոդները^a պատմա-համեմատական, համակարգային, կոմպլեքսային ուսումնասիրման, կառուցվածքանշանային: Բանահյուսության բանահավաքչական հետազոտությունները. նյութերի հավաքման և մշակման մեթոդիկան: Բանահյուսության ստադիալ հետազոտության սկզբունքը և պարբերացման խնդիրները: Բանահյուսության դասակարգումը. բանահյուսական ստեղծագործությունների համակարգման սկզբունքները. տեսակների և ժանրերի բաժանումը: Ժանրի հասկացությունը և հիմնական հատկանիշները բանահյուսության մեջ: Բանահյուսության ժանրային կազմը: Տարբեր ժանրերի ճակատագիրը. որոշ ժանրերի մահացման և որոշ ժանրերի գոյատևման ու արդյունավորման պատճառները: Նոր ժանրերի գոյացումը իբրև հասարակության սոցիալական զարգացման արդյունք: Երաժշտական, դրամատիկական, խաղային պահերը տարբեր ժանրերի կատարման ժամանակ: Ժողովրդական կատարողների տիպերը, նրանց անհատական վարպետությունը: Հանրային ստեղծագործության հարաբերակցությունը կատարման անհատական բնույթի և պրոֆեսիոնալիզմի հետ, ավանդականություն և հանպատրաստի հորինում: Բանահյուսական ստեղծագործությունների պոետիկան: Եղանակի դերը երաժշտական ֆոլկլորում: Կայուն և փոփոխական տարրերը բանահյուսության մեջ.

նրանց համադրությունը տարբեր ժանրերում: Տիպական տեղիների և հարակա մակդիրների դերը: Ժանրերի թափանցման և փոփոխության աստիճանը, նրանց փոխազդեցությունը և փոխներգործությունը: Ժանրային անցումների երևույթի գոյությունը: Հարակցումներ:

Բանահյուսություն և ազգագրություն:

Բանահյուսության փոխհարաբերությունը ժողովրդական մշակույթի մյուս ձևերի հետ (ծեսեր, պարարվեստ, կիրառական արվեստ, նկարչություն և այլն): Բանահյուսությունը և պրոֆեսիոնալ արվեստը (գրականություն, երաժշտական ստեղծագործություն, թատրոն, կինո, ռադիո, հեռուստատեսություն, կրկես, էստրադա):

2. ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բանագիտության պատմական զարգացման հիմնական փուլերը

Ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունների նկատմամբ գիտաաղբյուրագիտական շահագրգռությունների երևան գալը Հայաստանում 5-րդ դարի կեսերին: Բանավոր ավանդությունը իբրև երկրի և ժողովրդի մասին պատմության աղբյուր (Ագաթանգեղոս, Բուզանդ, Խորենացի): Բանահյուսական ստեղծագործությունների գրառումն ու վերամշակումը միջնադարում (12-17-րդ դդ.): Հանելուկների (Ն. Շնորհալի), առակների (Վ. Այգեկցի) և հայրենիների ժողովածուների կազմման սկզբունքները: Բանահյուսական ստեղծագործությունների նկատմամբ գիտական նոր վերաբերմունքի առաջացումը 19-րդ դարի առաջին կեսերին: Խ. Աբովյանի իբրև բանահավաք: Ժողովրդագիտակա նյութերը արևմտաեվրոպացի ճանապարհորդների նոթերում (Ֆ. Բոդենշտետ, Կ. Հաքստհաուզեն և ուրիշներ): Խ. Աբովյանի և Պ. Պռոշյանի վերաբերմունքը բանահյուսության և ժողովրդական լեզվի նկատմամբ:

Բնագիտության, իբրև գիտության առաջացումը 19-րդ դարի սկզբներին: Ռոմանտիզմի գաղափարների և համեմատական լեզվաբնության նվա-

ճումների ազդեցությունը բնագիտության պատմության սկզբնական փուլերի վրա:

Յա. Գրիմի բանագիտական հետազոտությունների մեթոդաբանությունը:

<<Առասպելաբանական դպրոցի>> սկզբնաորումը և նրա ներկայացուցիչները Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում: Առասպելաստեղծման պրոցեսի խնդիրը Մաքս Մյուլլերի աշխատություններում:

Հայ բանագիտական մտքի սկզբնավորումը 19-րդ դարի կեսերին: Մ. Էմինը և Հ. Գաթըրաճյանը իբրև հայ հին բանահյուսության և առասպելաբանության գիտական հետազոտության հիմնադիրները. նրանց աշխատությունների տեսական և մեթոդաբանական հիմնաբնությունները (<<Վեպք հնոյն Հայաստանի>>, <<Պատմության հայ մատենագրություն>>): Ստ. Պալասանյանը իբրև հայ հին բանահյուսության հետազոտող և ռուսական <<առասպելաբանական դպրոցի>> ազդեցությունը նրա վրա:

Հեղափոխական-դեմոկրատ Մ.Նալբանդյանը բանահյուսության մասին (<<Կրիտիկա>>, <<Սոս և Վարդիթեր>>):

Բենֆեյի <<փոխառությունների տեսության>> սկզբնավորումը 1850-ական թթ. այդ տեսության ուժեղ և թույլ կողմերը:

19-րդ դարի 70-ական թվականները իբրև նոր դարագլուխ հայ բանագիտության պատմության մեջ: Գ. Սրվանձտյանը որպես ժողովրդագիտական հուշարձանների սիստեմատիկ գրառման և հրատարակման հիմնադիր-առաջամարտիկ:

Բանահյուսական և ազգագրական նյութերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման աշխուժացման ու վերելքը 19-րդ դարի վերջին քառորդում (Բահաթրյաններ, Միանսարյան, Մ.Աբեղյան, Ա.Սեդրակյան, Տ.Նավասարդյան, Գ.Տեր-Ալեքսանդրյան, Հ.Ճանիկյան, Հ.Ալահվերդյան, Գ.Հովսեփյան, Ս.Հայկունի, Գ.Շերենց, Ե. Լալայան):

Տ. Նավասարդյանը բանահավաք և հրատարակիչ:

Գր. Խալաթյանցի <<ծրագիր հայ ազգագրության>>-ը (1887թ.) և ժողովրդագիտական նյութերի հավաքման նկատմամբ գիտական մոտեցման նրա պատմակազմակերպչական նշանակությունը:

Ս. Հայկունին բանահավաք:

<<Մարդաբանական ուսմունքի>> սկզբնավորումը 19-րդ դարի վերջերին Արևմտյան Եվրոպայում. Թեյլորի և Լանգի <<Սյուժեների ինքնագոյացման տեսությունը>>, Ջ. Ֆրեյդերի <<Ոսկե ընծյուղ>> աշխատությունը:

<<Պատմական դպրոց>> իբրև գերիշխող ուղղությունը 19-րդ դարի 90-ական թթ.ռուս բանագիտության մեջ Վս. Միլլերի <<Ակնարկներ ռուս ժողովրդական բանահյուսության>> աշխատությունը պատմաբանահյուսական քննությունների տեսական հիմունքների ու եղանակները. Բանահյուսության դասակարգայնության խնդիրները. <<Պատմական դպրոցի>> շուրջը ծավալված հետագա բանավեճերը:

Մ. Աբեղյանը քնագետ, գրապատմական և պատմա-բանասիրական տեսությունները (<<Հայ ժող. առասպելները>>, <<Հայ ժողովրդական վեպը>>, <<Հայ վիպական բանահյուսություն>>), քնարական բանահյուսության հետազոտման եղանակները:

Ե. Լալայանը ժողովրդագետ և ժողովրդագիտական նյութերի հրատարակիչ. <<Ազգագրական հանդեսը>> և նրա գիտա-պատմական նշանակությունը:

<<Բյուրական>> շաբաթաթերթը և <<Էմինյան ազգագրական ժողովածու>> իբրև ժողովրդագիտական նյութերի պարբերականները:

<<Ֆիննական դպրոցը>> և նրա <<աշխարհագրական-պատմական>> մեթոդները. բանագետների միջազգային ֆեդերացիայի (FFC) ստեղծումը. Ա. Աստնեի <<Ընթիաթների սյուժեների նշացանկը>> և նրա մշակումն ու կիրառումը Ն. Անդրեևի կողմից ռուսական հեքիաթների նկատմամբ:

Բանահյուսական նյութերի կարգավորված արշավախմբային գրառումները 20-30-ական թվականներին:

Սոցիալ-պատմական մոտեցումը բանահյուսության նկատմամբ, իբրև 20-30-ական թթ. սովետական բանագիտության զարգացման գլխավոր ուղղություն:

Մ.Աբեղյանի նոր շրջանի բանագիտական գործունեությունը (Հին գուսանական-ժողովրդական երգերի ժող. խաղիկների, «Սասնա ծռերի» ուսումնասիրությունն ու գիտական հրատարակությունը):

Կ. Մելիք-Օհանջանյանի բանահավաքչական-բանագիտական գործունեությունը: «Պատմական» և «Մարդաբանական» դպրոցների քննադատությունը, պայքար «գռեհիկ սոցիոլոգիզմի» տեսության դեմ: Բանահյուսական ժանրերի համահավաք գիտական և հանրամատչելի ժողովածուների հրատարակության հիմնադրումն ու վերելքը:

Հ. Օրբելու բանագիտական աշխատությունները:

Ա. Ղանալանյանի բանահավաքչական-բանագիտական գործունեությունը:

Ժող. Բանահյուսության և գեղ. գրականության փոխառնչությունների բանագիտության մեջ (Ա. Ղանալանյան, Ա. Նազինյան):

Գր. Գրիգորյանի աշխատությունները ժողովրդական վեպի և պատմա-երգային բանահյուսության հետազոտման շուրջ:

Ա. Նազինյանի աշխատությունները և «Հայ ժողովրդական հեքիաթների» համահավաք բազմահատորյակը:

Ս. Հարությունյանի բանագիտական աշխատությունները:

«Սասնա ծռերի» նոր գրառումների աշխուժացումը 70-ական թթ. և նոր գրառումների հրատարակությունները:

Բանահյուսության սիստեմավորման նոր մեթոդները և սիստեմային հետազոտության փորձերը 70-ական թվականների:

3. ՀԱՅ ԲԱՆԱՀԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Ծիսական բանահյուսություն

ժողովրդական ծեսերը կենցաղում. ծեսերի տեսակներն ու ժող. բանահյուսությունը:

1. Հմայական բանահյուսություն

Կենցաղային հմայություն, նրա ծագումն ու տեսակները:

Խոսքը որպես հմայական արարողության կարևոր բաղադրիչ:

Հմայական բանաձևերի տեսակները (անեծքներ, օրհնանքներ, երգումներ, աղոթքներ): Անեծքների և օրհնանքների ժանրային նկարագիրը, նմանություններն ու տարբերությունները, նրանց տիպաբանությունը, իմաստային և կիրառական խմբերը: Անեծքների ու օրհնանքների կիրառումը հնում և ուշ շրջանի ժողովրդական կենցաղում: Երգումներ. նրանց կառուցվածքն ու տեսակները, հին և նոր կիրառությունները: Հմայական աղոթքներ. նրանց կառուցվածքն ու տիպաբանությունը: Աղոթքների տեսակները ըստ կիրառությունների (չար աչքի, հիվանդության, ծննդյան և այլն): Հին և նոր (քրիստոնեական) հավատալիքների զուգորդումը հմայական աղոթքներում: Աղոթքների կապը պարականոն գրույցների հետ: Կատարման բնույթն ու պայմանները: Աղոթքների գրավոր գրանցումը և կիրառությունները (հմայիլներ, ախթարքներ և այլն):

2. Տոնական բանահյուսություն

Տոնական բանահյուսության կապը տարեշրջանի բնական ցիկլերի և երկրագործական-արտադրական ծիսական կենցաղի հետ: Ծիսական արարողությունների նշանակությունն ու տիպաբանությունը: Հին հավատալիքների և քրիստոնեական կրոնի տարրերի համադրումը տոնական ծիսակարգում: Տոնական երգերի և խաղերի դասակարգումը:

Ծննդյան և նոր տարվա ծեսեր. տնից-տուն կամ երդիկից-երդիկ շրջելը, ավետիս տալը և մթերք հավաքելը: Ավետիսի երգերի և ծեսերի տեղական-աշխարհագրական տարատեսակները: Ավետիսի երգերի բանաստեղծական կառուցվածքը, ոճը և բովանդակությունը, բանաստեղծական պատկերների սիմվոլիկան:

Բարեկենդանի ծեսերի և գվարճությունների իմաստը և տեսակները: Տերընդեզի երգեր և բանաձևեր:

Համբարձման ծիսական արարողությունները իբրև ջրի և ծաղկի տոնի. վիճակահանություն կամ բախտագուշակում: Վիճակի երգեր, ոճը, կառուցվածքը, բովանդակությունը:

Վարդավառի ծիսական արարողությունները, դրանց իմաստը և տեսակները: Վարդավառի երգեր կամ բանաձևեր:

3. Ընտանեկան-ծիսական բանահյուսություն

ա) Հարսանիք. Հայկական հարսանեկան արարողությունների հիմնական պահերը: Յուրաքանչյուր պահի համար կատարվող բանահյուսական ստեղծագործությունները: Հարսանեկան երգեր, նրանց տեսակները ըստ ծիսական արարողության պահերի և գլխավոր անձանց, այդ երգերի բովանդակությունը և կատարման ժամանակը. երգերի սիմվոլիկան: Խաղային գործողությունները հարսանիքում, իմաստն ու տեղը հարսանեկան ծիսակարգում: Կենացները և բարեմաղթության բանաձևերը հարսանիքի ժամանակ:

բ) Թաղման արարողությունները. Ողբի և ողբերգերի սոցիալ-կենցաղային բնույթը և դրանց տեղը թաղման արարողություններում: Սգերգերի տիպերը հնից մինչև նորերս (հայրեններ-անտունիներ, սովորական ողբերգեր): Ողբերգերի բովանդակության տիպային-ավանդականը և կոնկրետ-իրադրականը: Ողբերգերի էմոցիոնալ-զգայական հագեցվածությունը. դրանց ավանդական բանաստեղծական սկսվածքը (հորինվածք, սիմվոլիկա, համեմատություն, կրկնություններ, մակդիրներ և հանպատրաստից հորինումներ): Ձայնարկուներ կամողբասացներ:

Արտածիսական ողբերգեր, դրանց տարատեսակները (զինվորի, պանդխտության, բաժանման), նման ողբերգերի ծագման կոնկրետ իրադրությունները: Արտածիսական ողբերգերի նմանությունն ու տարբերությունը ծիսականներից (թաղման, հարսանիքի):

բ) Վիպական բանահյուսություն

Հին առասպելներ - Հին առասպելաբանության բնորոշումն ընդհանրապես: Հայկական դիցարանը, կրած պատմական փոփոխություններն ու առանձնահատկությունները: Առասպելներ հայկական ցեղային աստվածությունների մասին (Հայկ, Արամ): Առասպելներ հին աստվածությունների մասին (Արա Գեղեցիկ, Վահագն, Միհր): Առասպելներ դյուցազունների մասին (Արտավազդ, Տորք Անգեղյա, Տիգրան): Առասպելներ սրբազան երկվորյակների մասին: Առասպելաբանական և պատմական տարրերի համադրումն ու համաձուլումը հայ հին առասպելաբանության մեջ: Ընդհանուր առասպելաբանականն ու կոնկրետ պատմականը: Հայ հին առասպելաբանության առանձնահատկությունները: Հին առասպելների պոետիկան (հորինվածք, վիպական կրկնություններ, մակդիրներ, ժղ. ստուգաբանություններ, վիպական պատկերներ, գրական վերամշակումներ): Հին առասպելների աղբյուրները Մ.Արեղյանի աշխատությունների նշանակությունը հին առասպելների պատմաաղբյուրագիտական և բանագիտական ուսումնասիրման բնագավառներում:

2. Ավանդություններ և ավանդական զրույցներ

Ավանդությունների և ավանդական զրույցների բնորոշումը: Պատմական և ստուգաբանական ավանդություններ: Վարքաբանական ավանդազրույցներ նվիրված պատմական կամ լեգենդար անձանց: Քրիստոնեական լեգենդներ և սնահավատական զրույցներ: Չգիտակցված գեղարվեստական ստեղծագործության առանձնահատկությունները ավանդություններում և ավանդազրույցներում: Պատմական անձանց և իրադարձությունների մասին ավանդություններն իբրև դրանց ժողովրդական գնահատման և մեկնաբանման արտահայտություններ: Քրիստոնեական ավանդազրույցների կապը պարականոն և կանոնիկ գրականության հետ: Սնահավատական զրույցների կապը հին առասպելաբանական պատկերացումների և ոգիների մասին ժողովրդական հավատալիքների հետ:

Ավանդությունների և ավանդական գրույցների համակարգման խնդիրը սովետական և համաշխարհային գիտության մեջ: Կատարված հետազոտությունների ուղղությունը, բանահավաքչական գործի և հրատարակության վիճակը:

3. Ժողովրդական վեպ (էպոս) - Ժողովրդական վեպի բնորոշումը: Ժողովրդական վեպի պատմական զարգացման էտապներն ու տեսակները:

Հայ հին ժողովրդական վեպերը (<<Վիպասանք>>, <<Պարսից պատերազմ>>, <<Տարոնի պատերազմ>>) և նրանց առանձնահատկությունները: Առասպելականի և պատմականի համադրումը <<Վիպասանքում>>. հորինվածքը, վիպականցիկները և կերպարները <<պարսից պատերազմի>> հորինվածքը, մասերը բանաստեղծական հատկանիշները, գաղափարական բովանդակությունը. Վիպականի և պատմականի հարաբերությունը: Պարսից պատերազմի կապն ու հարաբերությունը <<Տարոնի պատերազմի>>: <<Տարոնի պատերազմի>> վիպականա-գեղարվեստական առանձնահատկությունները, գաղափարական բովանդակությունը: Հայ հին ժող. վեպերը իբրև հայկական վիպական ավանդության պատմական զարգացման տարբեր աստիճաններ: Հին վեպերի աղբյուրները, գիտական հետազոտությունները:

<<**Սասնա ծռեր**>>. բնույթն ու հատկանիշները: Վեպի տիպաբանական խմբերը (Մոկաց և Մշո). Վեպի կառուցվածքը, հորինվածքը, գլխավոր կամ կայուն միջադեպերը, հերոսների գեղարվեստական կերպավորման հատկանիշները, կայուն մակդիրները և դրանց արժեքը, երգային հատվածները, դրանց տեղ ու դերը: Վիպական գլխավոր հերոսների բնութագրումը, նրանց ազգակցական հարաբերությունը, նմանություններն ու տարբերությունները: Վեպի գլխավոր սոցիալ-քաղաքական կոնֆլիկտը, առասպելաբանական, պատմական և կենցաղային բաղադրիչները, դրանց վիպական հարակցումները: Վիպական հերոսների հարաբերակցությունը առասպելական հերոսների, վիպական դրվագներին՝ առաս-

պելաքանականի հետ: Վիպական հերոսների և միջադեպի հարաբերակցությունը պատմական անձանց և իրադարձությունների հետ: Վեպի պատմաաշխարհագրական գլխավոր տեղավայրերը և դրանց փոփոխությունները վեպի տեղաշարժման հետ: <<Սասնա ծռերի>> կապն ու հարաբերությունը հին հայկական վիպական ավանդության հետ, գրառման և հրատարակության պատմության հիմնական փուլերը, գլխավոր հրատարակություններն ու հրատարակողները, համահավաք բնագիրն ու թարգմանությունները: Վեպի հետազոտման էտապները, գիտական տարբեր ուղղությունները և տարբեր տեսակետներն ու բանավեճերը (Մ.Աբեղյան, Ստ. Կանայան, Բ. Խալաթյանց, Կ. Մելիք-Օհանջանյան, Հ.Օրբելի, Գր. Գրիգորյան):

4. Վիպական-պատմական երգեր - Վիպապատմական երգերի առանձնահատկությունները: Հայկական վիպական երգերի ծագումն ու զարգացումը: Հայկական դասական վիպապատմական երգերը (<<Լևոնի երգը>>, <<Կարոս խաչ>>, <<Նարեկացի>>, <<Ասլան աղա>>, <<Մոկաց Միրզա>>) և գեղարվեստական առանձնահատկությունները: Նոր շրջանի վիպական-պատմական երգերը նշանավոր անձանց և իրադարձությունների մասին (<<Հասան ղալա>> և ազգային-ազատագրական պայքարի հերոսներ և դրվագներ): Տեղական վիպական կենցաղային երգեր: Վիպական դասական երգերի կապն ու հարաբերակցությունը ժողովրդական վեպի հետ:

5. Վիպական-պատմողական արձակ

Բանավոր պատմողական արձակի տեսակները, նրանց փոխադարձ կապը, ընդհանրություններն ու տարբերությունները (հեքիաթ, առակ, անեկդոտ): Բանավոր պատմողական արձակի նյութերի հավաքումը, հրատարակումն ու հետազոտումը Հայաստանում (Գ.Սրվանձտյան, Տ.Նավասարդյան, Ա.Հայկուհի, Եր. Լալայան և ուրիշներ):

Ա. Հեքիաթ – Ընդհանուր սահմանումն ու բնութագրումը: Հեքիաթի հիմնական տեսակները՝ հրաշապատում և իրապատում: Այլ ենթատեսակները՝ նովելիստական-արկածային, կոմույլատիվ: Հեքիաթների հիմնական տիպերը, սյուժեներն ու մոտիվները: Հեքիաթային կերպարներ և պերսոնաժներ: Հրաշապատում հեքիաթների դիցաբանական, պատմական արմատները: Իրապատում հեքիաթների դիցաբանական, պատմական արմատները: Իրապատում հեքիաթների սոցիալական ֆունկցիան: Հեքիաթների ձևաբանական-կառուցվածքային ընդհանրություններ. Ազգային ռեպերտուար, նրա կապը միջազգայինի հետ: Հեքիաթների տիպերի-սյուժեների ուղեցույցներ (Ա.Սարնե, Ս. Թոմպսոն, Ն. Անդրեև, Էբերհարդ-Բորաթավ, Յու. Կրիժանովսկի և այլն), դրանց որոշ պայմանականությունը: Հեքիաթների արվեստն ու արտահայտչական միջոցները: Հեքիաթների հետազոտության մեթոդներն ու եղանակները (տիպաբանական, պատմա-համեմատական, ռեզիոնալ, թեմատիկ, ձևաբանական-կառուցվածքային և այլն):

Բ. Առակ - Ընդհանուր սահմանումը և բնութագրումը: Տեսակները՝ կենդանիների մասին հեքիաթ-առակներ և ոչ կենդանական առակ-զրույցներ: Հայկական միջնադարյան առակներ (Գոշ, Այգեկցի, <<Աղվեսագրքերի>> ձեռագրային և տպագիր ժողովածուներ):

Միջնադարյան առակների ժողովրդական ակունքները և փոխադարձ ներթափանցումներ, նրանց կապը բանավոր տարածվող ու կենցաղավարող առակների միջև: Կենդանական և բուսական պերսոնաժները առակներում, նրանց փոխհարաբերությունները միմյանց և մարդկային պերսոնաժների հետ: Առակների այլաբանությունը, դրա բարոյախոսական իմաստն ու ֆունկցիան: Առակ-առած կապերն ու փոխհարաբերությունները: Բանահյուսական բանաձևերը առակներում:

Գ. Անեկդոտ- Ընդհանուր բնութագիրը: Տեսակներն ու խմբերը ըստ բնագավառների, օբյեկտների, պերսոնաժների, կառուցվածքի և այլն:

Անեկդոտների ձևափոխումն ու փոխանցումը ժամանակի և տարածության մեջ: Ժողովրդական սատիրան և հումորը անեկդոտներում, հասարակական կյանքի ու կենցաղի անմիջական արձագանքումները անեկդոտներում: Տեղական զվարճախոսները, նրանց հորինածն ու նրանց շուրջն ստեղծված ու նրանց վերագրված անեկդոտների շարքերը: Անեկդոտները որպես ժողովրդական ժամանցի նյութ և միջոց:

Գ. Քնարական բանահյուսություն

Քնարերգությունը որպես գեղարվեստական ստեղծագործության սեռ: Ժողովրդական քնարական երգերի տեսակներն ու դասակարգում: Քնարական երգերի ուսումնասիրման փորձերն ու մոտեցումները: Քնարական երգերի ծագումը:

Գեղջկական քնարական երգերի տեսակները

Աշխատանքային երգեր, բնորոշումը, ծագման և զարգացման տեսությունը: Աշխատանքային երգերի տեսակներն ըստ աշխատանքի բնույթի և կիրառության: Աշխատանքի գործիքների, անասունների և մարդու արտացոլումն ու գնահատումը, սոցիալական մոտիվներն ու կրոնական հավատալիքները: Արվեստի առանձնահատկություններն ու արտահայտչական միջոցները: Աշխատանքային երգերի գրառման հրատարակման և ուսումնասիրման պատմությունը:

Խաղիկներ, ժանրային բնույթն ու հատկանիշները, թեմատիկայի ընդարձակություն, կապը արդիականության հետ: Խաղիկների տիպաբանական տեսակները, բանաստեղծական հորինվածքը, տաղաչափական հատկանիշները: Խաղիկներն իբրև քնարական երգերի տարրեր, խաղիկների զարգացումը կցումով և աճումով: Մեծ երգերի զարգացումը խաղիկներից հարադրումով և վերամշակումով: Կրկնակների դերը խաղիկներում: Խաղիկների բովանդակությունը. սիրո, բնության, աշխատանքի, սոցիալական և կենցաղային հարաբերությունների, մարդու արտաքինի և ներքինի արտացոլումը: Խաղիկների կատարման եղանակ-

ները (պարերգ, խմբերգ, զուգերգ): Խաղիկների գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմության գլխավոր փուլերը:

Քաղաքային քնարական երգերի տեսակները:

Հայրեններն ու անտունիները իբրև հին քաղաքային երգեր. Անվանումների ստուգաբանությունն ու իմաստը: Հայրենների կառուցվածքը, տաղաչափական հատկանիշները, լեզուն, ոճը, տարբերակները, տողերի և տների շարժունություն, տաղաշարքեր: Հայրենների կապը ուշ շրջանի ժողովրդական երգերի հետ (ոճաարտահայտչական միջոցներ, կնոջ արտաքինի, ժողովրդական կենցաղի նկարագրություն): Հայրենների հնությունը, իբրև հին գուսանական երգեր: Հայրենների բովանդակության և արվեստի հարատևումը անտունիների մեջ: Հայրենների և անտունիների բովանդակությունը (սիրո, ուրախության, հարսանիքի, պանդխտության, օրորոցի, լացի). միջնադարյան քաղաքային կենցաղի, սոցիալական կյանքի, մարմնական սիրո վայելքի, եկեղեցուն հակադրվող աշխարհիկ զգացումների և մտածողության, աշխարհիկ կյանքի քարոզի մոտիվները: Հայրենների հրատարակության և ուսումնասիրման պատմությունը <<Քուչակյան երգերի տեսությունը>>, հակադիր տեսակետներ (Ա. Տևկանց, Ա. Չոպանյան, Մ. Աբեղյան): Մ. Աբեղյանի ուսմունքը գիտական-բանասիրական արժեքը:

Նոր քաղաքային երգեր և նրանց հատկանիշները: Քաղաքային երգերի կապը աշուղական և արվեստավոր հորինողների երգերի հետ:

<<Ռաբիսային երգեր>>

Հայկական այլ սոցիալական խմբերի քնարական երգեր, պանդխտության, զինվորի, հայդուկի, կալանավորի երգեր. դրանց մեջ արտացոլված հիշյալ խմբերի ներկայացուցիչների աշխատանքի, կենցաղի պայմանները, աշխարհայացքն ու զգացմունքները: Ժողովրդական երգերի կատարման կուլտուրան. ժողովրդական երգիչներ, նրանց վարպետու-

թյունը, կատարման տարբեր տեղական ոճեր: Քնարական ավանդական բանահյուսության կատարման ժամանակակից ձևերը:

Օրորոցային և մանկական երգերը, որպես քնարական բանահյուսության հատուկ բնագավառ: **Մայրության և մանկատածության երգեր**, հորինված մեծահասակների կողմից ամենակրտսեր տարիքի երեխաների համար, իբրև արտահայտություն ժողովրդական մանկավարժության: Հիմնական տեսակները. օրորոցայիններ, մանկախաղաց երգեր, մանկական քայքի և լոգանքի երգեր. դրանց կենցաղային ֆունկցիան, կատարման ձևերը. յրոցային երգերի բանաստեղծական համակարգի առանձնահատկությունները, երգերում արտահայտված հիմնական գաղափարները:

Մանկական երգեր, հորինված և կատարված մանուկների կողմից: Մանկական երգերի հիմնական տեսակները. խաղերգեր (հաշվերգեր, ձեռնախաղի երգեր <<Խնամոցիկի>> երգեր, խաղավարտի երգեր), ծաղրերգեր, դրանց կենցաղային նշանակությունը, կապված որոշակի խաղային գործողությունների հետ: Բնության երգեր, նվիրված երկնային լուսատուներին և կենդանիներին. դրանց բովանդակությունը և արվեստը: Ծիսական երգեր, որոնք կատարվում են մանուկների կողմից տարեմուտին, ծննդյան, զատկին, երաշտի ժամանակ: Ծիսական արարողությունների իմաստը ըստ երգերի բովանդակության: Օրորոցային և մանկական երգերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը:

Դ. Առածաբանություն - Հասկացություն առածաբանության մասին իբրև լեզվական-բանահյուսական երևույթ: Առածաբանության տարրերը (շուտասելուկներ, ծաղրերգեր, խրատներ կայուն դարձվածներ):

Առածներ և ասացվածքներ

Առածների բնորոշում, իբրև բանահյուսական և լեզվական երևույթ: Առածների և ասացվածքների նմանություններն ու տարբերությունները: Պատմական իրականություն, վերաբերմունքի, փիլիսոփայության, սոցիալական տարբեր խմբերի բարոյախոսության արտացոլումը առած-

ասացվածքներում: Առած-ասացվածքների հավաքման և հրատարակման պատմությունը: Հիմնական հրատարակություններն ու ուսումնասիրությունները: Առած-ասացվածքների դասակարգման խնդիրները: Այբբենական, թեմատիկ և կառուցվածքային համակարգման եղանակները: Առած-ասացվածքների պատկերավոր լեզուն, այլաբանությունը, ռիթմական և հնչյունական կառուցվածքը, ավանդականությունը և նրա համալրման ուղիները: Առած-ասացվածքները ժողովրդական բանավոր ավանդության մեջ, դրանց ներթափանցումը բանահյուսական մյուս տեսակների և գրականության մեջ:

Հանելուկներ

Հանելուկների բնորոշումը որպես բանահյուսական առանձնահատուկ տեսակ: Հանելուկները հնագույն ծիսակարգում և բանահյուսական տեսակներում: Հանելուկների ծագման մասին եղած կարևորագույն տեսակետները: Հանելուկների հասարակական և կենցաղային կիրառությունները տարբեր ժամանակներում: Հասարակական գիտակցության զարգացման տարբեր փուլերի անդրադարձումը հանելուկներում: Հանելուկների դասակարգման տարբեր եղանակները (ըստ լուծման առարկաների, ըստ բանաձևերի, ըստ բանաձևերում անդրադարձված առարկաների հատկանիշների): Բուն հանելուկների առանձնացումը զրույց-հանելուկներից, խնդիր-հանելուկներից, պատկեր-հանելուկներից և այլն: Հանելուկների կազմությունը, պատկերավորման համակարգը, ռիթմն ու ոտանավորը: Հանելուկների կապը բանահյուսական մյուս տեսակների հետ (առած, երգ, հեքիաթ): Հանելուկների առարկայական աշխարհը: Ժողովրդական կյանքի և կենցաղի տարբեր կողմերի անդրադարձումը հանելուկներում:

Հայկական հանելուկների գրառման հրատարակման և ուսումնասիրման պատմությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հատ. 1-7, Ե., 1966-1976:
2. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Ե., 1970:
3. Կարապետյան Է., Օժիտը Հայոց մեջ, Ե., 1979:
4. <<Հայ ազգագրություն և բանահյուսություն>>, 1-25, Ե., 1970-2008:
5. Հայ ժողովրդական հեքիաթներ, 1-17-րդ հատ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1959-2012:
6. Հայրապետյան Թ., Բուժման ծիսահմայական և կենսաֆիզիկական ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում, Պատմաբանասիրական հանդես, 2006, № 2:
7. Հայրապետյան Թ., <<Վիպասանքի>> հնագույն առասպելների դրսևորումները <<Սասնա ծռեր>> դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում, Պատմաբանասիրական հանդես, 2008, № 2:
8. Հայրապետյան Թ., Տոմարական և աստղաբաշխական պատկերացումները հայ ժողովրդական հեքիաթներում, Պատմաբանասիրական հանդես, 2007, № 2:
9. Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Ե., 1975:
10. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Ե., 2010:
11. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Եր., 2004:
12. Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Ե., 2006:
13. Հարությունյան Ս., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը. ընդհանուր ակնարկ, Եր., 2001:
14. Հարությունյան Ս., Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, [առաջաբան, բառարան, տեղանունների ծանոթագրություններ], Եր., 2000:
15. Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Ավետիսյան Պ., Գինին հայոց ավանդական մշակույթում, Եր., 2005:
16. Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը, II գիրք, Բանահյուսություն (Կազմողներ՝ Վարդանյան Ս. Ա., Խենճյան Է. Հ.), Եր., 2009:
16. Ղազիյան Ա., Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Եր., 1989:
17. Ղանալանյան Ա., Առածանի, Ե., 1960:
18. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Ե., 1969:

19. Ղանալանյան Ա., Դրվագներ հայ բանագիտության պատմության, Ե., 1985:
20. Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Ե., 1946:
21. Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Ե., 1964:
22. Մկրտչյան Մ., Հայ ժողովրդական պանդխտության երգեր, Ե., 1961:
23. Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956:
24. Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Եր., 1997:
25. Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները, Եր., 1997:
26. Պետրոսյան Ա., Հայոց ազգաձագման հարցեր, Եր., 2006:
27. Սահակյան Վ., «Սասնա ծռեր» վեպի պատումների քննական համեմատություն, Ե., 1976:
28. «Սասունցի Դավիթ», հրեյանական ժող., Արմֆան, Ե., 1939:
29. Տեր-Մկրտչյան Գ., Ճակատագրի տոնը (համբարձում), Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա., 1979:
30. Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Ե., 1958:
31. Арутюнян С., Армянская мифология, “Мифы народов мира”, т. I, М., 1980.
32. Арутюнян С., Мифы и легенды древней Армении Ереван, 2007.
33. Емелянов Л.И., Методологические вопросы фольклористики, Л-д, 1978.
34. Мелетинский Е.М., Герой волшебной сказки (происхождение образа), М-а, 1958.
35. Мелетинский Е.М., Поэтика Мифа, М., 1976.
36. Петросян А., Армянский эпос и мифология, Ереван, 2002.
37. Пропп В.Я. Исторические корни волшебной сказки. Ленинград, 1966.
38. Пропп В.Я. Морфология сказки, изд. 2, М-а, 1969.
39. Пропп В.Я., фольклор и действительность, М., 1976.
40. Путилов Б.Н., Методология сравнительно-исторического изучения фольклора, Л., 1976.
41. Топоров В., Отражение индоевропейского мифа в древнеармянской традиции, “ИФЖ”, 1977, № 3.
42. Фольклор. Поэтическая система., 1977.
43. Халатянц Г., Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, М., 1896.

Ժ.01.06 – ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

1. ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼ

Տպագրությունը որպես հաղորդակցության միջոց: Պարբերական հրատարակությունների չափային բնութագիրը. ֆորմատ, ծավալ, հրատարակչական մամուլ: Հ. Շմավոնյանի <<Ազդարար>> հանդեսը: Մխիթարյան միաբանության մամուլը: <<Բազմավեպ>>-ի խմբագիրները: Մ. Թաղիադյանը խմբագիր:

Հայ ազգային-պահպանողական մամուլը 19-րդ դարի 2-րդ կեսին

Հայ քաղաքական մամուլի սկզբնավորումը, զարգացման ընթացքը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին: <<Մուրճ>> ամսագիրը: <<Մուրճի>> խմբագիրները: <<Հյուսիսափայլ>> ամսագիրը: Ստեփանոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի հրապարակախոսությունը: Գրիգոր Արծրունին և <<Մշակը>>: <<Մշակի>> խմբագիրները 1892-1920 թթ.: Աբգար Հովհաննիսյանի <<Փորձ>> և <<Արձագանք>> պարբերականները: Ստեփան Ոսկանի պարբերականները: Զմյուռնիայի <<Արշալույս արարատյան>> պարբերականը /խմբ. Ղ. Պալտազարյան/: Արփիար Արփիարյանը խմբագիր և հրապարակախոս: Հակոբ Պարոնյանը խմբագիր: Երվանդ Օտյանի խմբագրական գործունեությունը: Հայաստանի Հանրապետության մամուլը 1918-20թթ.: Սփյուռքահայ մամուլը 1920-30-ական թթ.: Խորհրդահայ մամուլի ընդհանուր բնութագիրը: Արդի հայ մամուլ. զարգացման ընթացքը և օրինաչափությունները:

ԱՄՆ-ի մամուլի բնութագիրը: Ֆրանսիական մամուլի բնութագիրը

2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԼՄ

Ռադիոն և հեռուստատեսությունը արտերկրում: Հեռուստատեսություն և տպագրություն. փոխհարաբերություններ: <<Էկրանի լեզու>> հասկացության էությունը, բաղադրիչները: Ռադիոյի և հեռուստատեսության հանրային և մասնավոր մոդելներ. ՀՀ հեռուստառադիոթերթերի ընդհանուր

բնութագիրը: Հեռուստառադիոշուկայի արդի փուլի առանձնահատկությունները ՀՀ-ում: Կաբելային և արբանյակային հեռուստատեսություն: Տեղեկատվական տեխնոլոգիաներ. դրանց դասակարգումը: Նոր մեդիա. ընդհանուր բնութագիրը:

3. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԼՄ

Հաղորդակցություն. էությունը, սխեմատիկ մոդելը: Հաղորդակցության մջջոցներ. մեդիա. սահմանումը և գործառույթները: Հաղորդակցության տեսակները: Ցանցային հաղորդակցության առանձնահատկությունները: Բանավոր հաղորդակցություն և մշակույթ: ԶԼՄ-ի համակարգը: ԶԼՄ-ի մոնոպոլիա. միջազգային և հայաստանյան իրավիճակների համեմատական վերլուծություն: ԶԼՄ սոցիոլոգիա: Ընտրությունների լուսաբանման գործընթացի քաղաքական սկզբունքները: <<Քաղաքական հաղորդակցություն>> հասկացությունը: ԶԼՄ-ի տեղը քաղաքական հաղորդակցության համակարգերում: Ընտրությունների լուսաբանման գործընթացի քաղաքական սկզբունքները: ԶԼՄ-ում կիրառվող քաղաքական մանիպուլյացիոն հնարանքներ: Քաղաքական կոնֆլիկտների տիպաբանությունը: Մարկետինգ հասկացությունն ու գործառույթները: ԶԼՄ-ի մենեջմենթ. Գործառույթները: Մարկետինգային կառավարման հայեցակարգեր: Բրենդ և բրենդինգ: Տեղեկատվական շուկա. կառուցվածքը, ուսումնասիրման մեթոդները: Մարկետինգային կառավարման հայեցակարգեր: PR-ի սահմանումը, էությունը, հիմնական սկզբունքները և գործառույթները: ԶԼՄ-ի հետ աշխատանքի առանձնահատկությունները, մեթոդները, գործիքները: Մշակութային գլոբալացում: Գլոբալացում և ռիսկ: Տեղեկատվական հասարակություն և հասարակական ծրագրեր: Քաղաքակրթությունների ուսումնասիրության գիտական դարոցները: Հետինդուստրիալ քաղաքակրթությունը, նրա հիմնարար չափորոշիչները, զարգացման հեռանկարները: Ավանդույթները և գլոբալացման դարաշրջանը: Տեղեկատվական պատերազմներ և տեղեկատվական անվտանգություն:

4. ՉԼՄ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը ՀՀ-ում: Անմեղության կանխավարկածի իրավունքը և արտահայտվելու ազատությունը: Ժուռնալիստի էթիկական պատասխանատվության մեխանիզմները: Էթիկական մարտահրավերները նոր մեդիայում: Ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքները և տեսությունները: Մամուլի ազատության հիմնախնդիրը: Քաղաքական գովազդ. իրավական կարգավորումը: Իրավական հասկացությունները ժուռնալիստիկայում. պատիվ և արժանապատվություն, դրանց պաշտպանությունը ՀՀ-ում: ՀՀ օրենքը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին»: «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալոյան Լ.Ա., Մշակ լրագրի հրապարակախոսությունը /1905-1921թթ./, Եր., 2007:
2. Անանյան Գ., Ավետիք Արասխանյան, Եր., 1987:
3. Անանյան Գ., Հայ լրագրության առաջնեկը, Եր., 1995:
4. Ավետիսյան Յու., «Անահիտ» հանդեսը, Եր., 1999:
5. Ավետիսյան Ա., Հանրային կապեր, Եր., 2008:
6. Բայադյան Հր., Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն, Եր., 2000:
7. Բայադյան Հր., Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում, Եր., 2005:
8. Բայադյան Հր. Մշակույթ և տեխնոլոգիա, Եր., 2003:
9. Գևորգյան Լ., «Մուրճ» ամսագիրը, Եր., 1982:
10. Գևորգյան Լ., Գր. Արծրունին և նրա «Մշակ»,-ը, Եր., 1996:
11. Ձանգվածային լրատվության միջոցներ. օրենքներ և պրակտիկա, «Արտիկլ 19», 1999, էջ 7-12, 47-54, 139-152:
12. Ձանգվածային լրատվության անկախ միջոցների մենեջմենտ, Եր., 1996:
13. Խառնատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և մամուլի հրապարակախոսության պատմությունից, Եր., 1980:

14. Խառատյան Ա., Հասարակական միտքը Ջնյունհայի հայ մամուլում (1840-1900), Եր., 1956-1960:
15. Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, (1858-1960), Եր., 1989:
16. Հակոբյան Մ., Ջնյունահայ պարբերական մամուլը (1861-1880), Եր., 1984:
17. Հեռուստատեսային ժուռնալիստիկա, թարգմ. ռուսերենից, Եր., 2003:
18. Հեռուստատեսություն և ռադիո. լրագրության և ստեղծագործական մեմեջմենտ, Եր., 2000:
19. Հովսեփյան Մ., Ռադիոշուկայի զարգացման օրինաչափությունները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2002:
20. Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Եր., 1975:
21. Մխիթարյան Մ., <<Հյուսիսափայլ>> ամսագիրը, Եր., 1958:
22. Մխիթարյան Մ., 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ մամուլի պատմությունից, (<<Փորձ>>, <<Արձագանք>>), Եր., 1976:
23. Մխիթարյան Մ., Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը (19-րդ դ. 1-ին կես), Եր., 1994:
24. Մկրտչյան Ա., Նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները Հայաստանի լրատվամիջոցներում, Եր., 2004:
25. Ստեփանյան Լ., Հեռուստատեսային ռեպորտաժ, Եր., 2009:
26. Քոչեր Դ., Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա, թարգմ. անգլերենից, Եր., 2001:
27. Авраамов Д. С., Профессиональная этика журналиста, М., 1991.
28. История мировой журналистики, под ред., Корнилова Е., Ростов на Дону, 2000.
29. Котлер Ф., Основы маркетинга, Москва, 1991.
30. Королько В., Основы публич рилейшнз, Москва, 2002.
31. Лазутина Т. В. , Профессиональная этика журналистов, документы и справочные материалы, Москва, 1999.
32. Мелюхин И., Информационное общество; истоки, проблемы, тенденции развития, Москва, 1999.
33. Почепцов Г., Информационные войны, Москва, 2000.
34. Радиожурналистика, под ред. Шереля А., Москва, 2005.
35. Учебник по Internet – <http://g.msn.com//>.

36. Castells M., The information Age: Economy, Society, and Culture, vol. 1: The Rise of the Network Society, 1996, Oxford: Blackwell.
37. Castells M., The information Age: Economy, Society, and Culture, vol. 2: The Rise of the Network Society, 1997, Oxford: Blackwell.
38. Castells M., The information Age: Economy, Society, and Culture, vol. 3: The Rise of the Network Society, 1998, Oxford: Blackwell.
39. Rosan D., Multimedia and the Future, Cambridge, 1994.
40. Robert J., Watkins Government Controls of advertising, NY, 1996.
41. Fraser P., Seitel, Practise of public relations, Prentis Hill, 2000.

Ժ.01.07 – ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անտիկ գրականության առարկան, ուսումնասիրության մեթոդներն ու աղբյուրները: Հոմերոսյան հարցը: «Իլիական» ու «Ոդիսական» պոեմները, նրանց պատմական ու դիցաբանական հիմքերը: Հոմերոսյան պոեմների պոետիկան: Հոմերոսյան էպոսի քայքայումը:

Խրատական էպոսի առաջացումը: Հեսիոդոսի «Աստվածների ծագումը» և «Աշխատանքներ և օրեր» պոեմները: Պատմության դիցաբանական ըմբռնումները:

Քնարերգության առաջացումը: Քնարերգության հիմնական տեսակները և դեմքերը՝ Արքիլոքոս, Սապֆո, Ալքայոս, Անակրեոն, Պինդարոս, Կալլինոս:

Հին Հունական դրաման և թատրոնը, նրա պատմական և դիցաբանական հիմքերը: Էսքիլեսի ողբերգությունների հիմնական առանձնահատկությունները: «Պրոմեթևսը շղթայված», «Օրեստական» ողբերգությունները: Սոֆոկլեսի ողբերգությունների հիմնական առանձնահատկությունները: «Անտիգոնե», «Էդիպ արքա» ողբերգությունները:

Եվրիպիդեսի ողբերգությունների հիմնական առանձնահատկությունները: «Իփիգենիան Ավլիսում», «Մեդեա» ողբերգությունները: Ժողովրդավարության ճգնաժամի արտացոլումը Արիստոֆանեսի կատակերգություններում:

Հին Հունական արձակը: Նրա տարատեսակները՝ պատմագրություն, ճարտասանություն, փիլիսոփայություն: Պլատոնի «Սոկրատեսի պաշտպանականը»: Հելլենիստական գրականության հիմնական առանձնահատկությունները, կապը տեղական մշակույթների հետ: Նոր ժանրերը: Հին հունական վեպը: Հռոմեական մշակույթը: Հռոմի պատմությունը և դիցաբանությունը: Հռոմեական գրականության առաջին շրջանը: Թարգմանական գրականություն: Պլավտուսի և Տերենտիուսի կատակերգությունները: Հռոմեական գրականության ոսկեդարը: Վերգիլիուսի ստեղծագործությունը: Գյուղական աշխատանքի փառաբանությունը Վերգիլիուսի պոեզիայում: «Էնեականի» իբրև ազգերի էպոսի, թեման և պոետիկան: Նոր առնչությունները հոմերոսյան էպոսի հետ: Հռոմեական քնարերգության համայնապատկերը Կուտուլլուսից մինչև Օվիդիուս: Անտիկ գրականության դասերը և նշանակությունը:

Արևմտաեվրոպական միջնադարյան մշակույթի գլխավոր հատկանիշները: Քրիստոնեության դերը և նշանակությունը միջնադարյան մշակույթի համար: Սխոլաստիկական և միստիկական: Ֆեոդալիզմ և ասպետականություն: Միջնադարյան արվեստի կարևորագույն գծերը: Գրականությունը միջնադարի մշակութային համակարգի մեջ:

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան գրականության տիպերը: Լատիներեն գրականությունը և նրա տեսակները: Փիլիսոփա-աստվածաբանական գրականությունը: Օգոստինոս Երանելու «Խոստովանությունները»:

Միջնադարյան էպիկական գրականություն: Սկանդինավյան էպիկական պոեմները: «Բեովուլֆ» և «Երգ Սիդի մասին» էպոսները: Ֆրանսիական

էպոսի առաջացումը և նրա զարգացման աստիճանները: «Ռուլադնի երգը» որպես ֆրանսիական հերոսական էպոս: Գերմանական էպոսը. «Նիբելունգների երգը»: Ասպետական վեպ և քնարերգություն: «Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը»: Տրուբադուրների պոեզիան: Տրուբադուրների պոեզիայի առանձնահատկությունները: Միջնադարյան Եվրոպական գրականությունը:

ՎԵՐԱԾՆՆԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իտալիայի մշակութային իրավիճակը 14-16-րդ դարերում:

Ալիգիերի Դանտեի կյանքը և ստեղծագործությունները: «Նոր Կյանք» ժողովածուն: «Աստվածային կատակերգության» սկզբնաղբյուրները, կառուցվածքը և այլաբանական շերտերը: Բեատրիչեի և Վերգիլիուսի կերպարները: Խորհրդանիշների համակարգը և թվային միստիկան: Ֆրանսուա Վիյոնի պոեզիան: Չոսերը և անգլիական նախապերածննդի գրականությունը:

Պետրարկայի «Երգերի գիրքը»: Բոկկասչոյի ստեղծագործությունները: «Ֆյամետա» վեպը. «Դեկամերոնի» նշանակությունը իտալական և եվրոպական արձակի համար: Իտալական հումանիզմի բնութագիրը: Ռեֆորմացիան Գերմանիայում և գերմանական հումանիզմի շրջանները: **Ուրիխ Ֆոն Հուտտեն:** **Էրազմ Ռոտերդամցին** և նրա «Գովք հիմարության» երգիծանքը:

Իտալական ազդեցությունները ֆրանսիական Վերածնության վրա: Մարգարիտ Նավարրացու խմբակը:

Դեպերյե: Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպը:

Պլեադի գեղագիտությունը: Մոնտենի «Էսսեները»:

Վերածնության առաջացումը Անգլիայում: Թ. Մորի «Ուտոպիան»: Նախաշեքսպիրյան թատրոնը: Քրիստոֆեր Մաուլոյի ողբերգությունները:

Շեքսպիրի կյանքն ու առեղծվածը: «Քրոնիկները» և «Սոնետները»: Կատակերգությունները: Շեքսպիրի մեծ ողբերգությունները «Համլետ»,

«Օթելլո», «Լիր Արքա», «Մակբեթ»: Շեքսպիրի աշխարհայեցողությունը: Շեքսպիրի դրամատիկական հանճարի բնութագիրը:

Իսպանական գրականության գլխավոր գծերը: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և Իսպանիայի գաղութային քաղաքականությունը: Պիկարոյական վեպը: Սերվանտեսի կյանքը: «Դոն Կիխոտի» սկզբնաղբյուրները: Դոն Կիխոտի կերպարը: Իսպանական թատրոնի սկիզբը: Սերվանտեսի պիեսները:

Լուպե դե Վեգան¹ իսպանական Վերածնության թատրոնի գագաթ: 16-րդ դարի իսպանական դրամատուրգիան: Կալդերոնի փիլիսոփայական դրամաները:

17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կլասիցիզմի առաջացումը Ֆրանսիայում: Կլասիցիզմի տեսությունը՝ Ն. Բուալո, Դը Օբինյակ: Կլասիցիզմը և անցյալի գրական- մշակութային ժառանգությունը: Կոռնեյլի ողբերգությունների գլխավոր հատկանիշները («Սիդ», «Պոդիկտոս»):

Ռասինի պիեսների բարոյա-հոգեբանական ուղղվածությունը («Ֆեդրա», «Անդրոմաքե»):

Մոլիերի թատրոնը և սոցիալական կատակերգությունը («Դոն Ժուան», «Տարտյուֆ», «Միզանտրոպ»):

Կլասիցիզմի հետագա ճակատագիրը Ֆրանսիայում և Արևմտաեվրոպական մյուս երկրներում (Անգլիա, Գերմանիա, Իտալիա):

Անգլիական վեպի ձևավորումը և զարգացումը 18-րդ դարում: Դ.Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» վեպի գլխավոր գաղափարները:

Ջ.Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները». եվրոպական քաղաքակրթության քննադատությունը Սվիֆթի կողմից: Սվիֆթի ուտոպիան: Սենտիմենտալիզմի առաջացումը Անգլիայում:

Լ.Ստերնի «Տրիստրամ Շենդի» վեպը: Ռիչարդսոնի սենտիմենտալիզմը («Պամելա», «Կլարիս»): Հ.Ֆիլդինգի, Սմոլետի ստեղծագործությունները:

Ֆրանսիական լուսավորչական գրականությունը: Պայքար կլասիցիզմի դեմ: **Ռուսոյի** «բնական մարդու» տեսությունը: Ռուսոյի սենտիմենտալիզմը և հակագրական» գեղագիտությունը. («Նոր Էլոիզ», «Խոստովանություն»): **Դ.Դիդրոյի** գրական գործունեությունը: Դիդրոն արվեստի և գրականության տեսաբան: Դրամայի ժանրի առաջացումը: Դիդրոյի վեպերը («Միանձնուհի», «Ռամոյի ազգականը», «Ժակ Ֆատալիստ»):

Վոլտերի երգիծանքը: Վոլտերը և կլասիցիզմի գեղագիտությունը:

Լայբնիցի լավատեսական աշխարհայացքի քննադատությունը «Կանդիդ կամ Օպտիմիզմ» վիպակում: Փիլիսոփայական վիպակները:

Վոլտերը՝ դրամատուրգ:

Բոմարշեի դրամատուրգիան: 18-րդ դարի ֆրանսիական հոգեբանական վեպը. Աբբա Պրևո («Մանոն Լեսկո», «Շողերլո դը Լակլո», «Վտանգավոր կապեր»):

Լուսավորությունը Գերմանիայում:

Հերդերի գրական-փիլիսոփայական գործունեությունը:

Լեսսինգը արվեստի տեսաբան («Լաոկոոն», «Համբուրգյան դրամատուրգիա»): «Գրոհ և փոթորիկ» շարժումը:

Վ.Գյոթեի գրական գործունեության սկիզբը. («Երիտասարդ Վերթերի տառապանքները», «Գյոց Ֆոն Բեռլիխինգեն»): Գյոթեի քնարերգությունը: Գյոթեն արձակագիր: Գյոթեի «Ֆաուստ» ողբերգությունը:

Շիլլերը և արվեստի ազատության տեսությունը. («Նամակներ մարդու գեղագիտական դաստիարակության մասին» տրակտատը): Շիլլերի «Ավագակները», «Սեր և խարդավանք» պիեսների նորարարական նշանակությունը: Շիլլերի պատմական դրամաները, նրա քնարերգությունը:

19-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոմանտիզմի պատմական նախադրյալները: Ռոմանտիզմի փիլիսոփայական ակունքները: **Է.Կանտի** «Դատողական ունակության քննադա-

տությունը» և «արվեստի անկախության» տեսությունը իբրև ռոմանտիզմի փիլիսոփայական նախահիմք: Անհատի նշանակության բարձրացումը և նրա գոյաբանական արժեքը **Ֆիխթեի** փիլիսոփայության մեջ և նրա ազդեցությունը գերմանական ռոմանտիզմի գեղագիտության վրա: **Ֆ.Շելլինգի** «Արվեստի փիլիսոփայությունը» աշխատությունը. միֆի և միֆագիտակցության նրա մեկնաբանությունը իբրև նոր պոետիկայի սկիզբ: **Ավգուստ և Ֆրիդրիխ Շլեգել** եղբայրները. գրականության պատմականության տեսակետը: Նովալիսի «Գիշերվա հիմները»: **Հյուդերլինը** և անտիկ մշակույթը: Գերմանական ռոմանտիկական արձակը: Գյոթեն և Հեգելը ռոմանտիզմի մասին: **Հոֆմանի** ստեղծագործությունները («Փոքրիկ Ցախեսը»): Շամիսոյի «Պետեր Շլեհմիլի արկածները» վիպակը: **Հ.Հայնեի** քնարերգությունը. նրա քաղաքական երգիծանքը («Գերմանիա», «Աթթա Տրոլ») պոեմները:

Անգլիական ռոմանտիզմի ներքին հակասությունները: «Լճային» դպրոցի բանաստեղծները. **Վորդսվորթ, Քուրիջ, Սաութի**: Վորդսվորթ, «Լիրիկական բալլադները», «Նախերգանքը»: Ռոմանտիզմի **Բայրոն-Շելլի** գիծը: **Բայրոնի** «դեմոնիզմը». մարդու կոնցեպցիան Բայրոնի պոեզիայում. («Կայեն», «Դոն Ժուան», «Մանֆրեդ»): Բայրոնի պոետիկան:

Շելլիի քնարերգությունը: Վալտեր Սկոտի վիպասանությունը. նրա նորարարությունը: Ռոմանտիզմը Ֆրանսիայում:

Շատոբրիանի ռոմանտիզմը («Քրիստոնեության հանճարը», «Աթալա»): **Վ.Հյուգոն** բանաստեղծ, դրամատուրգ, վիպասան:

Ֆրանսիական ռոմանտիկական պոեզիան. Լամարթին, Ալֆրեդ դը Վինյի, Ալ դը Մյուսսե: Պրոսպեր Մերիմեի ռոմանտիզմի ինքնատիպությունը:

Ամերիկյան ռոմանտիզմ: **Էդգար Պոյի** նովելները: «Ագռավը» բանաստեղծությունը:

Ֆ.Կուպերի և Վաշ. Իրվինգի ստեղծագործությունները: **Հ.Մերվիլի** «Մորի Դիկ» վեպի սիմվոլիստական և փիլիսոփայական հիմքերը:

Ռալֆ Էմերսոնը և նրա «տրանսցենտենտալիզմը»:

Էմիլի Դիկկինսոնի քնարերգությունը:

Ուոլթ Ուիթմենի «Խոտի տերևները» իբրև արևմտյան նոր պոեզիայի նախասկիզբ: Պոեզիայի և պոետականի նոր ըմբռնումը Ուիթմենի կողմից:

Անցում ռոմանտիզմից ռեալիզմ:

Բալզակի «Մարդկային կատակերգության» կառուցվածքը և նրա գեղագիտական փիլիսոփայական կոնցեպցիան: Մարդը և հասարակությունը: **Ստենդալի** գեղագիտական հայացքները («Զբոսանքներ Հռոմում» նրա վեպերը) «Կարմիրն ու Սևը», «Պարմի մենաստանը»:

Ռոմանտիկական իդեալի փլուզումը **Գ.Ֆլոբերի** վեպերում («Տիկին Բովարի», «Զգացական դաստիարակություն»): Ֆլոբերի պոետիկան:

Դիքենսի վիպասանությունը. մանկության թեմայի արծարծումը Դիքենսի վեպերում («Օլիվեր Թվիստ»):

Թեքերեյի «առանց հերոսների» վեպի տեսությունը («Մնափառության տոնավաճառ»): Նատուրալիզմի և սիմվոլիզմի առաջացումը Ֆրանսիայում: Ռոմանտիզմի քայքայումը և սիմվոլիզմի առաջացումը:

Է. Զոլայի «Էքսպերիմենտալ» վեպի տեսությունը: «Ռուզոն Մակարներ» վիպաշարը:

Շառլ Բոդլերի «Չարի ծաղիկներ» ժողովածուի փիլիսոփայական-գեղագիտական հիմքերը: Շ.Բոդլերը և նոր պոեզիայի սկզբունքները:

Երաժշտության և պոեզիայի հարաբերությունների հարցը **սիմվոլիզմի** տեսության մեջ: Պ.Վեռլենի «Պոետական արվեստ» բանաստեղծությունը: Նրա բանաստեղծական ուղին և պոետիկայի գլխավոր հատկանիշները:

Ա.Ռեմբոյի նորարարական պոեզիան և նրա արձակ պոեմները («Պայծառացումներ», «Մեկ սեզոն Դժոխքում»):

Ս.Մալարմեի «լեզվական-սիմվոլիստական» գեղագիտությունը. («Ֆավնի հետճաշա հանգիստը» բանաստեղծությունը): Սիմվոլիզմի ազդեցությունը եվրոպական պոեզիայի վրա:

Օսկ. Ուայլդի գեղագիտությունը «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը:

Բեռնարդ Շոուի դրամատուրգիան:

20-րդ դարի Գրավականութուն

Ջեյմս Ջոյսի նորարարությունը. «Դուբլինցիներ» պատմվածաշարը: «Արվեստագետի դիմանկարը երիտասարդ հասակում»: «Ուլիսեսը» որպես 20-րդ դարի վեպի նոր կոնցեպցիա: Պարոդիայի հասկացությունը «Ուլիսեսում»:

Մարսել Պրուստի «Կորած ժամանակների որոնումները» վիպաշարի փիլիսոփայական հոգեբանական հիմքերը: Ֆ.Կաֆկան և էքսպրեսիոնիզմի գրականությունը: Մարդու իրավիճակի պատկերումը Կաֆկայի վեպերում և նովելներում: («Դատավարություն», «Դոյակ», «Կերպարանափոխություն», «Դատավճիռ»):

Թոմաս Մանի ստեղծագործության ուղին «Բուրենբրոքներից» մինչև «Դոկտոր Ֆաուստուս»: Թոմաս Մանի փիլիսոփայական և գեղագիտական հայացքները («Դոկտոր Ֆաուստուս»):

Հայնրիխ Մանի գեղարվեստական կոնցեպցիան:

Հերման Հեսսեն և գերմանական գրականության զարգացումը 20-րդ դարի առաջին կեսին. («Տափաստանի գայլը», «Հուլունքախաղ»): Հերման Հեսսեն և Արևելքը («Ճանապարհորդություն դեպի Արևելք»):

Ռ.Մ.Ռիլկեն և արևմտաեվրոպական պոեզիան 20-րդ դարի սկզբներին: «Դուինյան էլեգիաներ» և «Սոնետներ Օրփեոսին» շարքերի հոգևոր-փիլիսոփայական հիմքերը: Ավստրո-գերմանական պոեզիան 20-րդ դարում. (Թրակլ, Ցելան, Էնցենսբերգեր):

Թ.Ս.Էլիոթը և 20-րդ դարի մոդեռնիստական պոեզիան: Էլիոթի պոեմները («Մեռյալ երկիր», «Չորս կվարտետ», «Մոխրե չորեքշաբթի»):

Էլիոթի քննադատական հայացքները: Եվրոպական մշակույթի անկման գաղափարները Էլիոթի պոեզիայում:

Դիլան Թոմասի քնարերգությունը: Հետպատերազմյան շրջանի անգլիական պոեզիան: Ֆրանսիական սյուրռեալիզմի պոեզիան:

Ա. Բրետոնի «Մանիֆեստները». **Ապոլիներ, Էյուար, Արագոն, Պրևեր, Պոլ Վալերի, Սեն Ժոն Պերս:**

Ֆրանսիական Էկզիստենցիալիստական գրականությունը: **Ալ.Կամյուի** «Ընդվզող մարդը», Կամյուի Էկզիստենցիալիզմը. («Օտարը», «Ժանտախտը»): Կամյուի դրամատուրգիան: Աբսուրդի տեսությունը:

Ժան Պոլ Սարտրի փիլիսոփայական կոնցեպցիան և նրա գեղարվեստական մարմնավորումը. Սարտրը վիպագիր («Սրտխառնուք») և դրամատուրգ:

20-րդ դարի ամերիկյան գրականության հիմնական ուղղությունները.

Ջ.Լոնդոն («Մարտին Իդեն»), **Թ. Դրայզեր** («Ամերիկյան ողբերգություն»): «Կորուսյալ սերնդի» գրականությունը: **Ս.Ֆիցջերալդի** «Մեծն Գեթսբի» և «Գիշերն անուշ է» վեպերը: «Ամերիկյան երագի» փլուզումը: Ուժեղ մարդու կերպարը **Է. Հեմինգուեյի** ստեղծագործություններում: («Ֆիեստա», «Ծերունին և ծովը»): **Ուիլ. Ֆոլկների** «Հարավային վեպը» «Գիտակցության հոսքի» մեթոդը Ֆոլկների ստեղծագործություններում («Աղմուկ և ցասում»): Ֆոլկների պատմվածքները:

Հետպատերազմյան շրջանի ամերիկյան արձակը. **Ջ.Ապդայկ, Սելինջեր, Վոնեգուտ: Վիլ.Սարոյանը** արձակագիր («Մարդկային կատակերգություն» վեպը, պատմվածքները) և դրամատուրգ («Իմ սիրտը լեռներում է», «Քո կյանքի ժամանակը»): 20-րդ դարի ամերիկյան դրամատուրգիան. (Թենեսի Ուիլյամս, Յուջին Օ'Նիլ): Ամերիկյան բիթնիկների պոեզիան. ընդվզման և խռովարարական տրամադրությունները **Ա. Գինզբերգի, Լ. Ֆերլինգերտի, Ռ.Լոուելի** ստեղծագործություններում:

Ֆրանսիական «աբսուրդի» թատրոնը. **Ադամով, Իոնեսկո, Բեքտո:** Մարդու անհետացման գաղափարը Բեքտոի պիեսներում («Գողոյին սպասելիս»): Ֆրանսիական «Նոր վեպը». **Մ.Բյուֆոր, Ն.Սարրոտ, Ա. Ռոբ Գրիյե:** Անգլիական փիլիսոփայական-հոգեբանական արձակը 1950-80-ական թվականներին (Ուիլ. Գոլդինգ, Ա.Մերդոկ): 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի գրականության զարգացման հիմնական միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տրոնսկի Ի., Հին հունական գրականության պատմություն, Ե., 1951
2. Տրոնսկի Ի., Հռոմեական գրականության պատմություն, Ե., 1951
3. Առաքելյան Ա., Հունական գրականության պատմություն, Ե., 1968 թ.
4. Առաքելյան Ա., Հռոմեական գրականության պատմություն, Ե., 1956 թ.
5. Лосьев А, Античная литература, М, 2005
6. Մամիկոնյան Հովհ., Արտասահմանյան գրականության պատմություն, Վերածննդի դարաշրջան, Եր. 1957
7. Սողոմոնյան Ս., Արտասահմանյան գրականության պատմություն, Ե. 1981
8. Արևմտաեվրոպական գրականության պատմություն, Վաղ Միջնադար, Ե., 1949
9. История зарубежной литературы. Средние века и Возрождение, М., 1987
10. Արտամոնով Ս., 17-18-րդ դդ. արտասահմանյան գրականության պատմություն, Ե., 1986
11. 19-րդ դ. արտասահմանյան գրականության պատմություն, Ե., 1989
12. Արտասահմանյան գրականության պատմություն, Ե., 1985
13. Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, Ե., 2008

Անգլո-ամերիկյան գրականություն

1. Անիքստ Ա., Շեքսպիր, Ե., 1988
2. Հարությունյան Ա., Ետպատերազմյան ամերիկյան պոեզիայի զարգացման հիմնական միտումները /1945-1970/
3. Ивашева В.В., Литература Великобритании 20-го века, М., 1984
4. Кеттл А., Введение в историю английского романа, М., 1966

5. Михальская Н.П., Аникин Г.В., Английский роман 20-го века, М., 1980
6. Михальская Н.П., История английской литературы, в 2-х томах, М., 1985
7. Литературная история США, в 3-х томах, М., 1978
8. История английской литературы в 5-и томах
9. Гилензон Б. А., История литературы США, М., 1987
10. Урнов М.В., Вехи традиций в английской литературе, М., 1986
11. Սեդրակյան Ա., Էզրա Փաունդ, Ե., 2001

Ֆրանսիական գրականություն

1. История французской литературы в 4-х томах, М., 1946-63
2. Обломиевский Д., Французский символизм, М., 1973
3. Обломиевский Д., Французский романтизм, М., 1947
4. Бахтин М.М., Франсуа Рабле и народная культура средневековья, М., 1990
5. Андреев Л.Г., Козлова Н.П., Косиков Г.К., История французской литературы, М., 1987
6. Реизов Б.Г., Французский романтизм 19-го века, М., 1977
7. Բախչինյան Հ., Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության, Ե., 2004

Գերմանական և ավստրիական գրականություն

1. История немецкой литературы в 5-и томах, М., 1962-76
2. Берковский Н.Я, Романтизм в Германии, Л., 1983
3. Лейтес Н.С., От “Фауста” до наших дней, М., 1987
4. Павлова Н.П., Типология немец. романа 1940-1945, М., 1985
5. История литературы ФРГ, М., 1980
6. Սողոմոնյան Ս. Ս., Լեսսինգ, Գյոթե, Հայնե, Երևան, 1978
7. Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Ե., 1975
8. Մատինյան Կ., 20-րդ դարի երկրորդ կեսի ավստրիական դրաման, Ե., 2004
9. Առաքելյան Ա., Հերման Հեսսեն և Արևելքը, Երևան, 2009,
10. Առաքելյան Ա., 20-րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպերը.Թ.Ման, Ե., 2017,
12. Ալեքսանյան Ա., Ռ. Մուզիլի գրական-փիլիսոփայական հայացքները, Ե., 2009
13. Ստեփանյան Ս., Ժամանակի երկու ընկալում, Ե., 2009

Իսպանական գրականություն

1. Плавский З.И., Испанская литература 17-19 веков, М., 1978
2. Плавский З.И., Испанская литература 19-20 веков, М., 1982
3. Тертерян И., Испытание историей, Очерки испанской лит-ры 20-го века, М., 1973
4. Штейн А.Л., История испанской литературы, М., 1994
5. Пидаль Р.М., Избранные произведения; испанская литература сред. веков и Возрождения, М., 1998
6. Пидаль Р.М., Избранные произведения, М., 1961
7. Гильермо Диас, Плаха, История и теория испанской лит-ры, М., 2000

Լատինամերիկյան գրականություն

1. История лит-ры Лат. Америки, в 4-х томах, М., 1985-2004.
2. Худ. своеобразие литератур Лат. Америки, М., 1976.
3. Кутейшикова В. Н., Роман Лат. Америки 20-го века, М., 1964.
4. Торрес-Риосеко А., Большая латиноамериканская лит-ра, М., 1972.

Իտալական գրականություն

1. История итальянской лит-ры в 2-х томах, т. 1, М., 1963, т. 2, М., 1963, Ֆրանչեսկո դե Սանկտի
2. Андреев М. Л., Хлодовсий Р., И., Итальянская лит-ра зрелова и позднего Возраждения, М., 1988.
3. Володина И. П., Акименко А. А., История итальянской лит-ры 19-20-х в.в., М., 1990.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թյուրք գրականության ձևավորումը Փոքր Ասիայում թյուրքական պետականության ձևավորման (սելջուկյան սուլթանաթ) և Օսմանյան պետության կազմավորման շրջանում (11-րդ-15-րդ դդ.): Օղուզական բանահյուսության և արաբա-պարսկական գրավոր մշակույթի ավանդույթների ազդեցությունը թուրք գրականության կազմավորման վրա: Բյուզանդական ազդեցության հիմնահարցը (արևելաքրիստոնեական միստիցիզմ և սուֆիզմ) թուրքական մշակույթի վրա: Թուրք գրականության հնագույն

և միջնադարյան շրջանների ուսումնասիրության պատմության համառոտ ակնարկ: Փոքր Ասիայի թյուրքական ցեղերի բանահյուսությունը և գրավոր մշակույթի ծագումը (13-րդ դար-14-րդ դարի սկիզբ): «Իմ պապ Քորքուֆի գիրքը». օղուզական էպոսը: Էպիկական պոեզիայի տարբեր ձևերի ու ժողովրդական դիդակտիկայի ստեղծագործությունների միահյուսումը «Օղուզ-նամե»-ում:

Սուֆիզմ և ուֆիական գրականություն: Զելալեդդին Ռումիի (1207-1279) կյանքը և գրական ժառանգությունը («Մասնավի-ի մասնավի», «Դիվան-ի Շամա», «Ֆիհի մա ֆիհի», «Մավաիլ-ի մաջալիս-ի սաբա», «Մաքթուբաթ») և դրա ազդեցությունը թուրք գրականության ձևավորման վրա: Սուլթան Վելեդ (1226-1312): Շեյյաթ Համզա (13-րդ դար):

Յունուս Էմրեի (մոտ. 1250-1320) - «Դիվանը», «Ռասալություն-նուսհիյե», «Խրատական ուղերձներ» պոեմը: Ժողովրդական «թեքե»-ի գրականությունը:

Ավանդական պատկերները Յունուս Էմրեի «Դիվան»-ում (համիսլամական և սուֆիական արքետիպեր): Յունուս Էմրեն՝ որպես սուֆիական բարոյականության ու բարոյագիտության ջատագով:

Աշըք Փաշա (1271-1332): Աշխարհիկ գրականության սկզբնավորումը:

Օսմանյան պետության կազմավորման ու ծաղկման շրջանի գրականության ընդհանուր բնութագիրը: Վարքագրություն: Սիրային պոեմ:

Ահմեդի (մոտ. 1329-1413), Շեյխի (?-1428): «Վերածնության» միտումների հիմնահարցը 15-րդ-16-րդ դարերի թուրք գրականության մեջ:

Ահմեդ Փաշա (?-1497): Միջնադարյան թուրքական արձակը: Աշուղական պոեզիա. Փիր Սուլթան Աբդալ (?-1560): Դիդակտիկ պոեզիայի առանձնահատկությունները: Քնարական պոեզիան 16-րդ դարում: Բաքի (1526-1600): 16-րդ դարի վերջի և 17-րդ դարի սկզբի թուրք գրականությունը: Քարաջաօղլան (1606-1689): «Քյոր-օղլի» էպոսը: 17-րդ դարի երկրորդ կեսի-18-րդ դարի գրականությունը:

«Քաղաքային գրականության» զարգացման առանձնահատկությունները: Նոր հերոսի, նոր թեմաների, նոր ժանրերի մուտքը քաղաքային գրականությանմեջ: Ռեալիստական ուղղության ուժեղացումը այդ գրականության մեջ: Երգիծանքի և առանձնապես ծաղերգության զարգացումը:

Յուսուֆ Նաբին (1642-1712). երգիծական-դիդակտիկ «Հայրիե» պոեմը: Նաբիի դիվանը, երգիծական, հասարակական և կրոնա-փիլիսոփայական մոտիվները նրա ստեղծագործություններում:

Ալաէդդին Սաբիտի (1650-1712). «Կիրճի պոեմը»՝ որպես «խաբեքայական չափածո նովելի» օրինակ:

«Կակաչների դարաշրջան»-ի գրականությունը: Ահմեդ Նեդիմի (1642-1730). Նրա գրական դպրոցը և ազդեցությունը ժամանակակիցների վրա: Նեդիմի հիմնական մոտիվները, նրա սիրային լիրիկայի առանձնահատկությունները:

Սուֆիական պոեզիայի անկումը: Շեյխ Մեհմեդ Գալիբը (1757-1799) որպես դրա վերջին խոշոր ներկայացուցիչ: Գալիբի «Գեղեցկություն և սեր» սուֆիական պոեմը: Մինչթանզիմայթյան գրականության առանձնահատկությունները:

Լուսավորչական գաղափարախոսության առաջին ծիլերը 18-րդ դարի վերջի- 19-րդ դարի սկզբի գրականության մեջ: Իզզեթ Մուլա Քեչեչիզադեն (1778-1829). «Տառապանք կրողը» պոեմը: Բայբուրթու Ջիհինիի (1797-1854) «Ջիհինիի արկածների պոեմ» երգիծական վիպակը, նրա հակաֆեոդալական ուղղվածությունը:

Թանզիմայթի բարենորոգումների նշանակությունը: Եվրոպականացում (արևմտականացում) հասկացությունը և դրա էությունը: Լուսավորական շարժման նպատակներն ու առանձնահատկությունները, դրսևորման ձևերը թուրք գրականության մեջ:

Թուրքական պարբերական մամուլի առաջացումը: Հրապարակախոսության սկզբնավորումը և ունեցած ազդեցությունը երկրի հասարակա-

կան-քաղաքական կյանքում: Նոր երևույթներ գեղարվեստական գրականության մեջ: Արձակ: Պոեզիա: Դրամատուրգիա: Թարգմանական գրականությունը և նրա նշանակությունը: Նոր գրական լեզվի խնդիրը:

«Թանգիմաթի գրականություն» հասկացությունը, դրա ժամանակագրական շրջանակները, տիպաբանական առանձնահատկությունները:

Իբրահիմ Շինասու (1826-1871) տեղն ու դերը Թանգիմաթի շրջանի թուրք գրականության ձևավորման գործում: Հասարակական-քաղաքական գործունեության վերլուծությունը: Ի. Շինասին որպես հրապարակախոս:

«Մտքերի լուսաբանում» (Tasvir-i Evkâr) լրագրի հիմնումը (1861) և դրա դերը թուրք մտավորականության ձևավորման գործում: Ի. Շինասու դիվանի թեմատիկ և տաղաչափական առանձնահատկությունները:

«Բանաստեղծի ամուսնությունը» (Şair Evlenmesi) առաջին պիեսը թուրք գրականության մեջ: Պիեսի սյուժեի, նրանում արծածված հրատապ թեմաների ու խնդիրների վերլուծություն, երգիծական ռեալիզմի վերհանում: Եվրոպական գրականության ազդեցությունները Շինասու գրականության վրա, նրա ստեղծագործություններում պահպանված թուրքական ժողովրդական ավանդույթները:

«Նոր Օսմաններ» գաղտնի կազմակերպությունը, նրանց գաղափարների արտացոլումը թուրք գրականության մեջ:

Աբդուլհամիդ Զիյա փաշան (1825-1880) որպես նոր թուրք գրականության հիմնադիրներից մեկը: Նրա չափածո ստեղծագործությունները, «Երազ» (Rûyâ) երկը. ստեղծագործությունների լուսավորչական ուղղվածությունը. որպես թարգմանիչ և գրաքննադատ: Նրա տեղը և դերը նոր թուրք գրականության մեջ:

Նամըք Քեմալը (1840-1888) թանգիմաթի գրականության խոշորագույն ներկայացուցիչ: Նրա հրապարակախոսական գործունեությունը. Ազգայնական գաղափարախոսության հիմնական դրույթները. պիեսները և դրանց տեղը թուրքական դրամատուրգիայի ձևավորման գործում: Օսմա-

նիզմի գաղափարախոսության արտացոլումը «Հայրենիք կամ Սիլիստրե» (Vatan yahut Silistre, 1873) դրամայում: Իսլամիստական գաղափարախոսության արտացոլումը «Խորեզմի շահ Ջելալեդդինը» (Celâlettin Harezmsâh, 1882) պատմական դրամայում: Կնոջ կերպարը դրամատուրգիայում և հրապարակախոսության մեջ. «Գյուլնիհալ» (Gülñihal, 1874), (Zavallı çocuk, 1873): Նամըք Քեմալը թուրքական պատմական վեպի հիմնադիր: Պատմական-խրատաբանական «Նախագզուշացում կամ Ալի բեյի արկածը» (Intibah yahut sergüzeşt-i Ali Bey, 1876) վեպը: «Ջեզմի» (Cezmi) պատմական անավարտ վեպը: Քեմալի պոեզիան. Թարգմանչական գործունեությունը, ստեղծագործությունների հասարակական-քաղաքական հնչեղությունը և գեղարվեստական նշանակությունը:

Աբդուլհաք Համիդի (1852-1937) տեղը Թանզիմաթի գրականության մեջ: Նրա պոեզիայի հիմնական թեմաները, լեզվաոճական ու տաղաչափական առանձնահատկությունները. դրամատուրգիան: «Հնդկաստանի դուստրը» (Duhter-i Hindû) պիեսի և «Թարըք» դրամայի առանձնահատկություններն ու գաղափարախոսական ուղղվածությունը:

Նովելի ժանրի ձևավորումը թուրք գրականության մեջ: Ահմեդ Միհդատը (1844-1913) որպես նովելիստ, վիպագիր, հրապարակախոս, թարգմանիչ: Նրա պատմվածքների հիմնական թեմաները, կերպարները և լեզվի առանձնահատկությունները: «Ֆելյաթուն բեյը և Ռաքըմ Էֆենդին» (Felâton Bey ve Râkim Efendi) վեպում բարձրացված արդիական հասարակական խնդիրների վերլուծություն և գեղարվեստական արժեքների վերհանում: Ահմեդ Միհդատի արկածային վեպերը: Նրա դերը նոր թուրքական արձակի ձևավորման ու գրական լեզվի պարզեցման ու զարգացման գործում:

Թանզիմաթի գրականության տիպաբանական բնութագիրը, առանձնահատկությունները, նրանց տեղը նոր գրականության մեջ: Հայ-թուրքական գրական առնչությունները թանզիմաթի շրջանում:

Թուրք գրականությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Սուլթան Աբդուլ Համիդ 20-րդի բռնապետական՝ «զուլումի» ռեժիմի հաստատումը, այդ քաղաքականության էությունն ու թողած ծանր հետևանքները: Հալածանքները հասարակական, գրական-մշակութային ոլորտում:

